

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայնագրի կողմերը (այսուհետ՝ Կողմեր),
ընդունելով պետական գնումներին առնչվող օրենքներին, կանոնակարգերին, ընթացակարգերին և գործելակերպերին վերաբերող իրավունքների և պարտականությունների արդյունավետ բազմակողմ շրջանակի անհրաժեշտությունը՝ համաշխարհային առևտրի ավելի լայն ազատականացման ու ընդարձակման հասնելու և համաշխարհային առևտուրը կարգավորող միջազգային շրջանակի բարելավման նպատակով,
ընդունելով, որ պետական գնումներին առնչվող օրենքները, կանոնակարգերը, ընթացակարգերը և գործելակերպերը չպետք է մշակվեն, ընդունվեն կամ կիրառվեն օտարերկրյա կամ տեղական արտադրանքների ու ծառայությունների և օտարերկրյա կամ տեղական մատակարարների նկատմամբ այնպես, որ տեղական արտադրանքներին կամ ծառայություններին կամ տեղական մատակարարներին պաշտպանություն տրվի, և դրանք չպետք է խտրականություն դնեն օտարերկրյա արտադրանքների և ծառայությունների կամ օտարերկրյա մատակարարների միջև,
ընդունելով, որ ցանկալի է ապահովել պետական գնումներին առնչվող օրենքների, կանոնակարգերի, ընթացակարգերի և գործելակերպերի թափանցիկությունը,
ընդունելով պետական գնումների վերաբերյալ միջազգային դրույթների արդար, արագ և արդյունավետ կիրառումն ապահովելու և իրավունքների ու պարտականությունների հավասարակշռությունը հնարավոր ամենաբարձր մակարդակի վրա պահելու նպատակով ծանուցման, խորհրդակցության, հսկողության և վեճերի կարգավորման միջազգային ընթացակարգեր հիմնելու անհրաժեշտությունը,
ընդունելով զարգացող երկրների, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրների զարգացման, ֆինանսական և առևտրային կարիքները հաշվի առնելու անհրաժեշտությունը,
ցանկություն ունենալով, համաձայն 1979 թվականի ապրիլի 12-ին ստորագրված և 1987 թվականի փետրվարի 2-ին փոփոխված՝ «Պետական գնումների մասին» Համաձայնագրի IX հոդվածի 6-րդ կետի «բ» ենթակետի, փոխադարձության հիման վրա ընդլայնել և բարելավել Համաձայնագիրը, ինչպես նաև ընդարձակել Համաձայնագրի գործողության շրջանակը՝ ներառելով ծառայությունների մասին պայմանագրերը,
ցանկություն ունենալով խրախուսելու Համաձայնագրի կողմ չհանդիսացող կառավարություններին՝ ընդունել այն ու միանալ դրան,
անցկացնելով հետագա բանակցություններ՝ ի կատարումն այս նպատակների,
սույնով համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված I

Սահմաններն ու գործողության շրջանակը

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է դրանով նախատեսված, ինչպես սահմանված է I Առդիրում¹, սուբյեկտների կողմից ցանկացած գնման վերաբերող ցանկացած օրենքի, կանոնակարգի, ընթացակարգի կամ գործելակերպի նկատմամբ:
2. Սույն Համաձայնագիրը կիրառվում է պայմանագրային հիմունքներով ցանկացած գնման նկատմամբ, ներառյալ՝ այնպիսի մեթոդներով, ինչպիսիք են գնումը կամ լիզինգը, վարձակալությունը կամ ապառիկ գնումը՝ գնելու կամ առանց գնելու տարբերակի, ներառյալ արտադրանքների և ծառայությունների ցանկացած համակցությունը:
3. Երբ սույն Համաձայնագրով նախատեսված գնման համատեքստում սուբյեկտները պահանջում են I Առդիրում չներառված ձեռնարկություններին պայմանագրեր կնքել հատուկ պահանջներով, III հոդվածը *mutatis mutandis* կիրառվում է նման պահանջների նկատմամբ:
4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է ցանկացած գնման պայմանագրի նկատմամբ, որի արժեքը պակաս չէ I Առդիրում սահմանված համապատասխան շեմից:

Հոդված II

Պայմանագրերի գնահատում

1. Սույն Համաձայնագիրն իրականացնելու նպատակով հետևյալ դրույթները կկիրառվեն պայմանագրերի արժեքը² սահմանելու համար:
 2. Գնահատումը հաշվի կառնի վարձատրության բոլոր ձևերը, ներառյալ պարգևավճարները, պատվովճարները, միջոցորդավճարները և ստացվելիք տոկոսները:
 3. Սուբյեկտի կողմից գնահատման մեթոդի ընտրությունը չի օգտագործվի, ինչպես նաև գնման պահանջը չի բաժանվի սույն Համաձայնագրի կիրառումից խուսափելու նպատակով:
 4. Եթե գնման անհատական պահանջը հանգեցնի ավելի քան մեկ պայմանագրի կնքման կամ առանձին հատվածներով կնքվող պայմանագրերի, գնահատման համար հիմք կհանդիսանա.
 - ա) նախորդ բյուջետային տարվա կամ, հնարավորության դեպքում, տրված 12 ամիսների ընթացքում կնքված նմանատիպ կրկնվող պայմանագրերում՝ համապատասխանաբար, հաջորդող 12 ամիսների ընթացքում քանակի և արժեքի նախատեսված փոփոխությունների փաստացի արժեքը, կամ
 - բ) բյուջետային տարում կամ սկզբնական պայմանագրին հաջորդող 12 ամիսների ընթացքում կրկնվող պայմանագրերի գնահատված արժեքը:
 5. Արտադրանքների կամ ծառայությունների լիզինգի, վարձակալության կամ ապառիկ գնման պայմանագրերի

դեպքում կամ ընդհանուր գումար չսահմանող պայմանագրերի դեպքում գնահատման հիմք կհանդիսանա հետևյալը.

ա) ֆիքսված ժամկետներով պայմանագրերի կնքման դեպքում, երբ դրանց ժամկետը 12 ամիս է կամ դրանից պակաս, դրանց ամբողջ տևողության համար ընդհանուր պայմանագրի արժեքը կամ, եթե դրանց ժամկետը գերազանցում է 12 ամիսը, դրանց ընդհանուր արժեքը՝ ներառյալ գնահատված մնացորդային արժեքը,

բ) անորոշ ժամկետով պայմանագրերի կնքման դեպքում՝ ամսական մասնավճարը բազմապատկած 48-ով:
Կասկածի դեպքում կիրառվում է «բ» ենթակետում նշված գնահատման երկրորդ հիմքը:

6. Այն դեպքերում, երբ նախատեսված գումար սահմանում է գնելու տարբերակ, գնահատման հիմք կհանդիսանա թույլատրելի գնման առավելագույն ընդհանուր արժեքը՝ ներառյալ գնման տարբերակները:

1 Յուրաքանչյուր Կողմի համար I Առօրյա բաժանված է 5 հավելվածների՝

- 1-ին հավելվածը ներառում է կառավարական կենտրոնական մարմինները.

- 2-րդ հավելվածը ներառում է կառավարական ենթակենտրոնական մարմինները.

- 3-րդ հավելվածը ներառում է բոլոր մյուս սուբյեկտները, որոնք գնումներ են կատարում սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան.

- 4-րդ հավելվածը սահմանում է սույն Համաձայնագրի ներքո դրականորեն կամ բացասականորեն թվարկված ծառայությունները.

- 5-րդ հավելվածը սահմանում է նախատեսված շինարարական ծառայությունները:

Համապատասխան շեմերը սահմանված են յուրաքանչյուր Կողմի հավելվածներում:

2 Սույն Համաձայնագիրը կիրառվում է գնումների մասին ցանկացած պայմանագրի նկատմամբ, որի արժեքը ծանուցման հրապարակման պահին, համաձայն IX հոդվածի, գնահատված է հավասար կամ շեմը գերազանցող:

Հոդված III

Ազգային մոտեցում և անխտրականություն

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում պետական գնումներին առնչվող բոլոր օրենքների, կանոնակարգերի, ընթացակարգերի և գործելակերպերի հետ կապված՝ Կողմերից յուրաքանչյուրը այլ Կողմերի արտադրանքներին, ծառայություններին և արտադրանքներ ու ծառայություններ առաջարկող մատակարարներին պետք է անմիջապես և առանց նախապայմանների ցուցաբերի ոչ պակաս բարենպաստ մոտեցում.

ա) քան ցուցաբերում է տեղական արտադրանքներին, ծառայություններին և մատակարարներին, և

բ) քան ցուցաբերում է ցանկացած այլ Կողմի արտադրանքներին, ծառայություններին և մատակարարներին:

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում պետական գնումներին առնչվող բոլոր օրենքների, կանոնակարգերի, ընթացակարգերի և գործելակերպերի հետ կապված՝ Կողմերից յուրաքանչյուրը կերաշխավորի հետևյալը.

ա) իր սուբյեկտները չպետք է ավելի անբարենպաստ մոտեցում ցուցաբերեն տեղում հաստատված մի մատակարարի՝ տեղում հաստատված մեկ այլ մատակարարի համեմատ՝ ելնելով օտարերկրյա մասնակցության կամ սեփականության աստիճանից, և

բ) իր սուբյեկտները չպետք է խտրականություն դնեն տեղում հաստատված մատակարարների նկատմամբ՝ ելնելով ապրանքի արտադրության կամ մատուցվող ծառայության երկրից՝ պայմանով, որ արտադրության երկիրը Համաձայնագրի Կողմ լինի՝ համաձայն IV հոդվածի դրույթների:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում ներմուծման հետ կապված ցանկացած մաքսատուրքի կամ վճարի, նման տուրքերի և վճարների գանձման մեթոդների, ներմուծմանը վերաբերող այլ կանոնակարգերի ու կարգերի և ծառայությունների առևտրի վրա ազդող այլ միջոցների նկատմամբ՝ բացառությամբ սույն Համաձայնագրով նախատեսված՝ պետական գնումներին առնչվող օրենքների, կանոնակարգերի, ընթացակարգերի և գործելակերպերի:

Հոդված IV

Ծագման կանոնները

1. Կողմը, սույն Համաձայնագրով նախատեսված պետական գնման նպատակով, այլ Կողմերից ներմուծված կամ մատակարարված ապրանքների և ծառայությունների նկատմամբ չպետք է կիրառի ծագման այնպիսի կանոններ, որոնք տարբերվում են բնականոն առևտրի ընթացքում և տվյալ գործարքի պահին միևնույն Կողմերից միևնույն արտադրանքների կամ ծառայությունների ներկրման կամ մատակարարման նկատմամբ կիրառվող ծագման կանոններից:

2. Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման համաձայնագրի (այսուհետ՝ ԱՀԿ Համաձայնագիր) Հավելված 1Ա-ի՝ Ծագման կանոնների մասին համաձայնագրի ներքո իրականացվելիք Ապրանքների ծագման կանոնների ներդաշնակեցման աշխատանքային ծրագրի և ծառայությունների առևտրին առնչվող բանակցությունների ավարտից հետո 1-ին կետում փոփոխություններ կատարելիս Կողմերը պետք է, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնեն այդ աշխատանքային ծրագրի ու բանակցությունների արդյունքները:

Հոդված V

Զարգացող երկրների համար հատուկ և տարբերակված մոտեցում

Նպատակները

1. Սույն Համաձայնագրի իրականացման և ղեկավարման ընթացքում, սույն հոդվածի դրույթների համաձայն, Կողմերը պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն զարգացող երկրների, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրների զարգացման, ֆինանսական և առևտրային կարիքները՝ հետևյալ կերպ.

ա) պաշտպանել նրանց վճարման հաշվեկշիռը, ինչպես նաև ապահովել տնտեսական զարգացման ծրագրերի

իրականացման համար պահուստային ֆոնդերի բավարար մակարդակը,

բ) խթանել տեղական արդյունաբերության հիմնումը կամ զարգացումը՝ ներառյալ փոքրամասշտաբ և տնայնագործական արդյունաբերությունը գյուղական և տնտեսապես հետամնաց տարածքներում, ինչպես նաև տնտեսության այլ հատվածների տնտեսական զարգացումը,

գ) աջակցել արդյունաբերական միավորներին, քանի դեռ նրանք ամբողջապես կամ մեծ մասամբ կախված են պետական գնումներից, և

դ) խրախուսել դրանց տնտեսական զարգացումը՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) նախարարական համաժողովին ներկայացված և նրա կողմից չմերժված՝ զարգացող երկրների միջև տարածաշրջանային կամ համաշխարհային համաձայնությունների միջոցով:

2. Սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան՝ Կողմերից յուրաքանչյուրը պետական գնումներին առնչվող օրենքներ, կանոնակարգեր և ընթացակարգեր մշակելիս և կիրառելիս պետք է դյուրացնի զարգացող երկրներից ներկրումների աճը՝ հաշվի առնելով առավել թույլ զարգացած երկրների, ինչպես նաև տնտեսական զարգացման ցածր փուլերում գտնվող երկրների հատուկ խնդիրները:

Ընդգրկումը

3. Նպատակ ունենալով ապահովելու, որ զարգացող երկրները կարողանան միանալ սույն Համաձայնագրին իրենց զարգացման, ֆինանսական և առևտրային կարիքներին համապատասխանող պայմաններով, սույն Համաձայնագրով նախատեսված՝ զարգացող երկրների գնումների հետ կապված բանակցությունների ընթացքում 1-ին կետում թվարկված նպատակները պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն: Ջարգացած երկրները սույն Համաձայնագրի դրույթներով նախատեսված ընդգրկման ցուցակները պատրաստելիս պետք է ջանան ներառել այնպիսի արտադրանքներ և ծառայություններ գնող սուբյեկտների, որոնց արտահանումը հետաքրքրում է զարգացող երկրներին:

Համաձայնեցված բացառություններ

4. Ջարգացող երկիրը կարող է պայմանավորվածության գալ սույն Համաձայնագրի ներքո բանակցությունների ցանկացած այլ մասնակիցների հետ ազգային մոտեցման մասին կանոններից փոխադարձաբար ընդունելի բացառությունների շուրջ՝ իրենց ընդգրկման ցուցակներում ներառված որոշակի սուբյեկտների, արտադրանքների կամ ծառայությունների առնչությամբ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի կոնկրետ հանգամանքները: 1-ին կետի «ա»-«գ» ենթակետերում նշված նկատառումները պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն այդ բանակցություններում: 1-ին կետի «դ» ենթակետում նշված՝ զարգացող երկրների միջև գործող տարածաշրջանային կամ համաշխարհային համաձայնություններին մասնակցող զարգացող երկրները նույնպես կարող են իրենց ցուցակներից բացառությունների վերաբերյալ պայմանավորվածություններ ձեռք բերել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի կոնկրետ հանգամանքները, ի թիվս այլ հարցերի, հաշվի առնելով տվյալ տարածաշրջանային կամ համաշխարհային համաձայնություններով նախատեսված պետական գնումների մասին դրույթները և, մասնավորապես, այն արտադրանքների ու ծառայությունների համար, որոնք կարող են ընդհանուր արդյունաբերական զարգացման ծրագրերի օբյեկտ լինել:

5. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո զարգացող երկիր հանդիսացող Կողմը կարող է փոփոխել իր ընդգրկման ցուցակները XXIV հոդվածի 6-րդ կետի՝ այդպիսի ցուցակները փոփոխելու մասին դրույթների համաձայն՝ հաշվի առնելով զարգացման, ֆինանսական և առևտրային իր կարիքները, կամ կարող է խնդրել Պետական գնումների հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) ազգային մոտեցման մասին կանոններից բացառություններ կատարել ընդգրկման ցուցակներում նշված որոշակի սուբյեկտների, արտադրանքների և ծառայությունների համար՝ պատշաճ կերպով հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի կոնկրետ հանգամանքները, ինչպես նաև 1-ին կետի «ա»-«գ» ենթակետերի դրույթները: Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո զարգացող երկիր հանդիսացող Կողմը կարող է նաև խնդրել Հանձնաժողովին բացառություններ կատարել իր ընդգրկման ցուցակների մեջ նշված որոշակի սուբյեկտների, արտադրանքների և ծառայությունների առնչությամբ՝ ի նկատի ունենալով զարգացող երկրների միջև գործող տարածաշրջանային կամ համաշխարհային համաձայնություններին իր մասնակցությունը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի կոնկրետ հանգամանքները, ինչպես նաև 1-ին կետի «դ» ենթակետի դրույթները: Ցուցակում փոփոխության վերաբերյալ Հանձնաժողովին ուղղված՝ Ջարգացող երկիր հանդիսացող Կողմի ցանկացած խնդրանք պետք է զուգակցվի համապատասխան փաստաթղթով կամ այնպիսի տեղեկատվությամբ, որը կարող է անհրաժեշտ լինել հարցի քննարկման համար:

6. 4-րդ և 5-րդ կետերը *mutatis mutandis* կկիրառվեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո դրան միացող զարգացող երկրների նկատմամբ:

7. 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված համաձայնեցված բացառությունները ենթակա են վերանայման ստորև ներկայացված 14-րդ կետի դրույթներին համապատասխան:

Ջարգացող երկիր հանդիսացող Կողմերին տեխնիկական աջակցություն

8. Ջարգացած երկիր հանդիսացող յուրաքանչյուր Կողմ դիմումի հիման վրա պետք է զարգացող երկիր հանդիսացող Կողմին տրամադրի այնպիսի տեխնիկական աջակցություն, որն ինքը տեղին է համարում պետական գնումների ոլորտում վերջիններիս խնդիրների լուծման համար:

9. Այս աջակցությունը, որ կտրամադրվի զարգացող երկիր հանդիսացող Կողմերին անխտրականության սկզբունքի հիման վրա, առնչվում է, ի թիվս այլ հարցերի, հետևյալին.

- հատուկ պայմանագրի կնքմանն առնչվող կոնկրետ տեխնիկական խնդիրների լուծում, և

- ցանկացած այլ խնդիր, որով դիմում ներկայացնող Կողմն ու մյուս Կողմը համաձայնում են զբաղվել այդ աջակցության շրջանակներում:

10. 8-րդ և 9-րդ կետերում նշված տեխնիկական աջակցությունը ներառում է զարգացող երկիր հանդիսացող Կողմի մատակարարների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի և մրցառքային դիմումների՝ սուբյեկտի կողմից նշված՝ ԱՀԿ-ի պաշտոնական լեզուներից որևէ մեկով թարգմանությունը, եթե զարգացած երկիր հանդիսացող Կողմերը թարգմանությունը չհամարեն դժվար իրականացնելի. այդ դեպքում զարգացած երկիր հանդիսացող Կողմերին կամ նրանց սուբյեկտներին ուղղված խնդրանքի հիման վրա բացատրություն պետք է տրվի զարգացող երկիր հանդիսացող Կողմին:

Տեղեկատվական կենտրոններ

11. Չարգացած երկիր հանդիսացող Կողմերը անհատապես կամ համատեղ հիմնում են տեղեկատվական կենտրոններ՝ զարգացող երկիր հանդիսացող Կողմերի՝ այնպիսի տեղեկատվություն ստանալու վերաբերյալ խելամիտ դիմումներին արձագանքելու նպատակով, որոնք վերաբերում են, ի թիվս այլ հարցերի, պետական գնումներին առնչվող օրենքներին, կանոնակարգերին, ընթացակարգերին և գործելակերպերին, նախատեսված գնումներին վերաբերյալ հրապարակված ծանուցումներին, սույն Համաձայնագրով նախատեսված սուբյեկտների հասցեներին, զնված կամ զնվելիք արտադրանքի կամ ծառայության բնույթին ու ծավալին, ներառյալ՝ հետագա մրցառքներին վերաբերող հասանելի տեղեկատվությանը: Հանձնաժողովը նույնպես կարող է հիմնել տեղեկատվական կենտրոն:

Առավել թույլ զարգացած երկրներին հատուկ մոտեցում

12. Հաշվի առնելով 1947 թվականի GATT-ի Պայմանավորվող կողմերի՝ 1979 թվականի նոյեմբերի 28-ի՝ «Չարգացող երկրների տարբերակված և ավելի բարենպաստ մոտեցման, փոխադարձության և ավելի լիարժեք մասնակցության վերաբերյալ Որոշման» (BISD 26S/203-205) 6-րդ կետը՝ զարգացող երկիր հանդիսացող Կողմերի օգտին ընդհանուր և հատուկ միջոցների շրջանակներում, առավել թույլ զարգացած երկիր հանդիսացող Կողմերին, ինչպես նաև այդ Կողմերի մատակարարներին հատուկ մոտեցում է ցուցաբերվում տվյալ Կողմի երկրում ծագած արտադրանքների և ծառայությունների առնչությամբ: Կողմերը կարող են սույն Համաձայնագրի արտոնությունները տրամադրել նաև այս Համաձայնագրի Կողմ չհանդիսացող առավել թույլ զարգացած երկրներին մատակարարներին՝ կապված տվյալ երկրներում ծագած արտադրանքների կամ ծառայությունների հետ:

13. Դիմումի դեպքում զարգացած երկիր հանդիսացող յուրաքանչյուր Կողմ պետք է իր կողմից տեղին համարվող օժանդակություն տրամադրի առավել թույլ զարգացած երկրների պոտենցիալ հայտատուներին՝ ներկայացնելու իրենց հայտերը և ընտրելու այն արտադրանքներն ու ծառայությունները, որոնք հավանականորեն հետաքրքրություն կառաջացնեն իրենց սուբյեկտների, ինչպես նաև առավել թույլ զարգացած երկրների մատակարարների մոտ, և նման ձևով օգնի նրանց համապատասխանել նախատեսված գնման օբյեկտ հանդիսացող արտադրանքներին և ծառայություններին առնչվող տեխնիկական կանոնակարգերին և չափանիշներին:

Վերանայում

14. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի կստուգի սույն հոդվածի գործողությունն ու արդյունավետությունը և յուրաքանչյուր երեք տարին մեկ, ելնելով Կողմերի ներկայացրած զեկույցներից, կիրականացնի հիմնական վերանայում՝ դրա արդյունքները գնահատելու համար: Որպես եռամյա վերանայման մաս և նպատակ ունենալով հասնելու սույն Համաձայնագրի դրույթների առավելագույն չափով իրականացմանը, ներառյալ, մասնավորապես, III հոդվածը, և հաշվի առնելով շահագրգիռ զարգացող երկրների զարգացման, ֆինանսական և առևտրային դրությունը, Հանձնաժողովը քննության կառնի այն, թե արդյոք սույն հոդվածի 4-6-րդ կետերի դրույթներով նախատեսված բացառությունները պետք է փոփոխվեն կամ երկարաձգվեն:

15. XXIV հոդվածի 7-րդ կետի դրույթներին համապատասխան անցկացվելիք բանակցությունների հետագա փուլերի ընթացքում զարգացող երկիր հանդիսացող յուրաքանչյուր Կողմ կքննարկի իր ընդգրկման ցուցակի ընդլայնման հնարավորությունը՝ հաշվի առնելով իր տնտեսական, ֆինանսական և առևտրային իրավիճակը:

Հոդված VI Տեխնիկական բնութագրեր (մասնագրեր)

1. Գնվելիք արտադրանքի և ծառայությունների բնութագրերը, ինչպիսիք են որակը, արտադրողականությունը, անվտանգությունը ու չափերը, խորհրդանիշները, տեքմիկանությունը, փաթեթավորումը, գունավորումը և պիտակավորումը, կամ դրանց արտադրության մեթոդներն ու գործընթացները և համապատասխանության գնահատման ընթացակարգերին առնչվող պահանջները սահմանող տեխնիկական մասնագրերը, որոնք սահմանվում են գնող սուբյեկտների կողմից, չպետք է մշակվեն, ընդունվեն կամ կիրառվեն՝ նպատակ հետապնդելով ստեղծել կամ արդյունքում հանգեցնել միջազգային առևտրի համար անհարկի խոչընդոտների:

2. Գնող սուբյեկտների կողմից սահմանված տեխնիկական մասնագրերը նպատակահարմարության դեպքում պետք է.

ա) հիմնված լինեն արտադրանքի արտադրողականության, այլ ոչ թե արտաքին կառուցվածքի կամ նկարագրական հատկանիշների վրա, և

բ) հիմնված լինեն միջազգային չափանիշների վրա (դրանց առկայության դեպքում), հակառակ դեպքում՝ ազգային տեխնիկական կանոնակարգերի³, ընդունված ազգային չափանիշների⁴ կամ շինարարական նորմերի

վրա:

3. Որոշակի ապրանքանիշի կամ առևտրային անվան, արտոնագրի, նախագծի կամ տեսակի, կոնկրետ ծագման, արտադրողի կամ մատակարարի վերաբերյալ պահանջ կամ հղում չի ներկայացվում՝ բացառությամբ, եթե չկա գնումների պահանջները ներկայացնելու բավականաչափ հստակ կամ դյուրըմբռնելի այլ ձև՝ պայմանով, որ մրցառքի փաստաթղթերում նշված լինեն «կամ համարժեք» բառերը:

4. Սուբյեկտները չպետք է մրցակցությունը խոչընդոտող հետևանք ունեցող որևէ ձևով այնպիսի խորհուրդ հայցեն կամ այն ընդունեն, որը կարող է օգտագործվել կոնկրետ գնման մասնագրերի նախապատրաստման համար, մի այնպիսի ընկերությունից, որը կարող է առևտրային շահ հետապնդել տվյալ գնման գործընթացում:

3 Սույն Համաձայնագրի նպատակով տեխնիկական կանոնակարգն այնպիսի փաստաթուղթ է, որը սահմանում է արտադրանքի կամ ծառայության կամ դրանց առնչվող գործընթացների կամ արտադրության մեթոդների առանձնահատկությունները, այդ թվում՝ նաև կիրառելի վարչական դրույթները, որոնց պահպանումը պարտադիր է: Այն կարող է նաև ներառել կամ առնչվել բացառիկ տերմինաբանության, խորհրդանիշների, փաթեթավորման, գունավորման կամ պիտակավորման պահանջների հետ, որոնք կիրառվում են արտադրանքի, ծառայության, գործընթացի կամ արտադրման մեթոդի առնչությամբ:

4 Սույն Համաձայնագրի նպատակներով չափանիշն այնպիսի փաստաթուղթ է, որը հաստատվել է ճանաչված մարմնի կողմից, որն ընդհանուր և կրկնվող օգտագործման համար՝ արտադրանքի կամ ծառայությունների կամ առնչվող գործընթացների կամ արտադրման մեթոդների հետ կապված՝ նախատեսում է կանոններ, ուղեցույցներ կամ հատկանիշներ, որոնց պահպանումը պարտադիր չէ: Այն նաև կարող է ներառել կամ առնչվել տերմինաբանության, խորհրդանիշների, փաթեթավորման, գունավորման կամ պիտակավորման պահանջների հետ, որոնք կիրառվում են արտադրանքի, ծառայության, գործընթացի կամ արտադրության մեթոդի առնչությամբ:

Հոդված VII Մրցառքային ընթացակարգեր

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր սուբյեկտների մրցառքային ընթացակարգերը կիրառվեն անխտրական ձևով և համապատասխանեն VII- XVI հոդվածների դրույթներին:

2. Սուբյեկտները որևէ մատակարարի չեն տրամադրի տեղեկատվություն որևէ կոնկրետ գնման առնչությամբ մի այնպիսի ձևով, որն արդյունքում կխոչընդոտի մրցակցությունը:

3. Սույն Համաձայնագրի նպատակներով՝

ա) բաց մրցառքային ընթացակարգերն այն ընթացակարգերն են, որոնց ներքո բոլոր շահագրգիռ մատակարարները կարող են հայտ ներկայացնել,

բ) ընտրովի մրցառքային ընթացակարգերն այն ընթացակարգերն են, որոնց ներքո, X հոդվածի 3-րդ կետի և սույն Համաձայնագրի այլ համապատասխան դրույթների համաձայն, կարող են հայտ ներկայացնել այն մատակարարները, որոնք հրավիրվել են սուբյեկտի կողմից,

գ) սահմանափակ մրցառքային ընթացակարգերն այն ընթացակարգերն են, երբ սուբյեկտը կապ է հաստատում մատակարարների հետ անհատապես՝ միայն XV հոդվածում սահմանված պայմանների ներքո:

Հոդված VIII Մատակարարների որակավորում

Մատակարարների որակավորման գործընթացի ժամանակ սուբյեկտները չպետք է խտրականություն դնեն այլ Կողմերի մատակարարների կամ տեղական ու այլ Կողմերի մատակարարների միջև: Որակավորման ընթացակարգերը պետք է համապատասխանեն հետևյալին.

ա) մրցառքային ընթացակարգերին մասնակցելու համար ցանկացած պայման պետք է հրապարակվի ժամանակին, որպեսզի շահագրգիռ մատակարարները հնարավորություն ունենան սկսելու և, քանի դեռ դա համատեղելի է գնումների գործընթացի արդյունավետ գործողության հետ, ավարտելու որակավորման ընթացակարգերը.

բ) մրցառքային ընթացակարգերին մասնակցելու պայմանները սահմանափակվում են նրանցով, որոնք էական են խնդրի առարկա պայմանագիրն իրականացնելու ընկերության կարողությունն ապահովելու համար:

Մասնակցության համար մատակարարից պահանջվող ցանկացած պայման, ներառյալ ֆինանսական երաշխիքները, տեխնիկական որակավորումները և տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է մատակարարի ֆինանսական, առևտրային և տեխնիկական հնարավորությունները պարզելու, ինչպես նաև որակավորումները հաստատելու համար, պետք է լինի այլ Կողմերի մատակարարների համար ոչ պակաս բարենպաստ, քան տեղական մատակարարների համար, և խտրականություն չդնի այլ Կողմերի մատակարարների միջև:

Մատակարարի ֆինանսական, առևտրային և տեխնիկական հնարավորությունները պետք է քննության առնվեն ինչպես մատակարարի համաշխարհային գործարար գործունեության, այնպես էլ գնող սուբյեկտի տարածքում ծավալած գործունեության հիման վրա՝ պատշաճ կերպով հաշվի առնելով մատակարարող կազմակերպությունների միջև եղած իրավական հարաբերությունները.

գ) մատակարարների որակավորման գործընթացը և դրա համար պահանջվող ժամանակը չպետք է օգտագործվեն մատակարարների ցուցակից կամ կոնկրետ նախատեսված գնման համար դիտարկվելուց այլ Կողմերի մատակարարներին դուրս թողնելու համար: Սուբյեկտները որպես որակավորված մատակարարներ կընդունեն այն տեղական մատակարարներին կամ այլ Կողմերի մատակարարներին, որոնք համապատասխանում են կոնկրետ նախատեսված գնումներին մասնակցելու պայմաններին: Այն մատակարարները, որոնք դեռ չեն որակավորվել և ցանկություն են հայտնում մասնակցելու կոնկրետ նախատեսված գնումներին, նույնպես քննության են առնվում՝ այն պայմանով, որ որակավորման ընթացակարգը ավարտելու համար բավարար ժամանակ լինի.

դ) որակավորված մատակարարների մշտական ցուցակներ պահող սուբյեկտները պետք է ապահովեն, որ մատակարարները կարողանան ցանկացած ժամանակ մասնակցել որակավորմանը, և որ դիմում ներկայացրած բոլոր որակավորված մատակարարները ողջամիտ կարճ ժամանակահատվածում ընդգրկվեն ցուցակում.

ե) եթե IX հոդվածի 1-ին կետում նշված ծանուցման հրապարակումից հետո դեռ որակավորում չստացած մատակարարը հայտ է ներկայացնում մասնակցելու համար նախատեսված գնումներին, սուբյեկտը պետք է անհապաղ սկսի որակավորման ընթացակարգերը:

զ) որակավորված մատակարար դառնալու համար դիմած մատակարարը համապատասխան սուբյեկտի կողմից պետք է տեղյակ պահվի վերջինիս ընդունած որոշման մասին: Սուբյեկտների կողմից մշտական ցուցակներում ընդգրկված որակավորված մատակարարները նույնպես պետք է ծանուցվեն ցուցակների վերացման կամ իրենց այդ ցուցակներից հանելու մասին:

է) Կողմերից յուրաքանչյուրը ապահովում է հետևյալը՝

i) յուրաքանչյուր սուբյեկտ և նրա ստորաբաժանումները հետևում են միասնական որակավորման ընթացակարգին՝ բացառությամբ պատշաճ կերպով հիմնավորված դեպքերի, երբ անհրաժեշտ է այլ ընթացակարգ կիրառել, և

ii) գործադրվում են ջանքեր նվազագույնի հասցնելու համար սուբյեկտների միջև որակավորման ընթացակարգերի տարբերությունները:

ը) «ա»-«է» ենթակետերի ոչ մի դրույթ չպետք է խոչընդոտ հանդիսանա մատակարարի հեռացմանը այնպիսի հիմքերով, ինչպիսիք են սնանկ ձանաչվելը կամ կեղծ հայտարարագրեր ներկայացնելը՝ պայմանով, որ այդպիսի գործողությունը համահունչ է սույն Համաձայնագրի՝ ազգային մոտեցման ու անխտրականության դրույթներին:

Հոդված IX

Նախատեսված գնման հետ կապված մասնակցության հրավեր

1. Համաձայն 2-րդ և 3-րդ կետերի՝ սուբյեկտները պետք է հրապարակեն նախատեսված գնումների բոլոր դեպքերի համար մասնակցելու հրավեր՝ բացառությամբ XV հոդվածում նշված դեպքերի (սահմանափակ մրցառքներ): Ծանուցումը պետք է հրապարակվի II Առօրյում նշված պատշաճ հրապարակման մեջ:

2. Մասնակցության հրավերը կարող է առաջարկվող գնումների վերաբերյալ ծանուցման ձևով լինել, ինչպես նախատեսված է 6-րդ կետում:

3. 2-րդ և 3-րդ Հավելվածներում նշված սուբյեկտները որպես մասնակցության հրավեր կարող են օգտագործել ծրագրված գնումների վերաբերյալ ծանուցումը, ինչպես նախատեսված է 7-րդ կետում, կամ որակավորման համակարգի վերաբերյալ ծանուցումը, ինչպես նախատեսված է 9-րդ կետում:

4. Այն սուբյեկտները, որոնք օգտագործում են ծրագրված գնումների վերաբերյալ ծանուցումը՝ որպես մասնակցության հրավեր, այնուհետև պետք է հրավիրեն հետաքրքրված բոլոր մատակարարներին՝ հաստատելու համար իրենց հետաքրքրվածությունը այն տեղեկատվության հիման վրա, որն առնվազն կներառի 6-րդ կետում նշված տեղեկատվությունը:

5. Այն սուբյեկտները, որոնք օգտագործում են որակավորման համակարգի վերաբերյալ ծանուցումը՝ որպես մասնակցության հրավեր, պետք է XVIII հոդվածի 4-րդ կետում նշված նկատառումների պայմանով և ժամանակին տրամադրեն տեղեկատվություն, որպեսզի հետաքրքրված մատակարարները պատշաճ հնարավորություն ունենան գնահատելու գնումների գործընթացին մասնակցելու իրենց շահերը: Այդ տեղեկատվությունը պետք է ներառի 6-րդ և 8-րդ կետերում նշված ծանուցումներում պարունակվող տեղեկատվությունը՝ վերջինիս հասանելիության չափով: Մի հետաքրքրված մատակարարին տրամադրված տեղեկատվությունը առանց խտրականության պետք է տրամադրվի մյուս հետաքրքրված մատակարարներին:

6. 2-րդ կետում նշված՝ առաջարկված գնումների վերաբերյալ յուրաքանչյուր ծանուցում կպարունակի հետևյալ տեղեկատվությունը.

ա) բնույթն ու քանակը՝ ներառյալ հետագա գնումների համար ցանկացած տարբերակը և, հնարավորության դեպքում, այդ տարբերակների իրականացման ժամկետների գնահատումը, կրկնվող պայմանագրերի դեպքում՝ բնույթն ու քանակը և, հնարավորության դեպքում, արտադրանքի և ծառայությունների գնման համար հաջորդ մրցառքի վերաբերյալ ծանուցումների ժամկետների գնահատումը,

բ) ընթացակարգը բա՞ց է, թե՞ ընտրովի, կամ՝ ներառելու՞ է բանակցություններ,

գ) ապրանքների կամ ծառայությունների մատուցումը սկսելու կամ ավարտելու ամսաթիվը,

դ) մրցառքին մասնակցելու հրավեր ստանալու կամ որակավորված մատակարարների ցուցակում ընդգրկվելու կամ մրցառքներ ստանալու համար անհրաժեշտ դիմումները ներկայացնելու վերջնաժամկետն ու հասցեն, ինչպես նաև՝ ներկայացվող դիմումի լեզուն կամ լեզուները,

ե) պայմանագիրը կնքող և մասնագրեր կամ այլ փաստաթղթեր ձեռք բերելու համար անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրող սուբյեկտի հասցեն,

զ) տնտեսական կամ տեխնիկական պահանջներ, ֆինանսական երաշխիքներ, մատակարարներից պահանջվող ցանկացած տեղեկատվություն,

է) մրցառքի հետ կապված փաստաթղթերի համար վճարվելիք գումարի վճարման չափն ու պայմանները, և

ը) արդյոք սուբյեկտը առաջարկներ է ներկայացնում գնման, լիզինգի, վարձակալության կամ ապահով գնման կամ այդ մեթոդներից ավելի քան մեկի համար:

7. 3-րդ կետում նշված՝ նախատեսված գնումների վերաբերյալ յուրաքանչյուր ծանուցում պետք է ներառի 6-րդ կետում նշված այնքան տեղեկատվություն, որքան հնարավոր է: Բոլոր դեպքերում այն պետք է ներառի 8-րդ կետում նշված տեղեկատվությունը, և՝

ա) հայտարարություն այն մասին, որ շահագրգիռ մատակարարները պետք է սուբյեկտին իրենց հետաքրքրությունը հայտնեն գնման գործընթացի առնչությամբ,

բ) սուբյեկտի հետ կապ պահպանող անձի կամ ստորաբաժանման նշում՝ հետագայում տեղեկատվություն ստանալու համար:

8. Նախատեսված գնումների յուրաքանչյուր դեպքի համար սուբյեկտը հրապարակում է ամփոփ ծանուցում ԱՀԿ-ի պաշտոնական լեզուներից մեկով: Ծանուցումը պարունակում է առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

ա) պայմանագրի առարկան,

բ) մրցառքին մասնակցելու կամ մրցառքին հրավիրվելու դիմում ներկայացնելու վերջնաժամկետները, և

գ) պայմանագրերի վերաբերյալ փաստաթղթերի ստացման հասցեները:

9. Ընտրովի մրցառքային ընթացակարգերի պարագայում որակավորված մատակարարների մշտական ցուցակներ պահող սուբյեկտները III Առդիրում թվարկված հրապարակումներից մեկում յուրաքանչյուր տարի հրապարակում են ծանուցում հետևյալի վերաբերյալ.

ա) պահվող ցուցակների թվարկումը, ներառյալ՝ դրանց վերնագրերը՝ ըստ գնվելիք արտադրանքի կամ ծառայությունների կամ արտադրանքի կամ ծառայությունների տեսակների,

բ) մատակարարների կողմից իրականացվելիք պայմանները՝ այդ ցուցակներում ընդգրկվելու նպատակով, և այն մեթոդները, որոնց միջոցով այս պայմաններից յուրաքանչյուրը պետք է ստուգվի համապատասխան սուբյեկտի կողմից, և

գ) ցուցակների վավերականության ժամկետը և դրանց վերահաստատման կարգը:

Այն դեպքում, երբ 3-րդ կետին համապատասխան, նման ծանուցումն օգտագործվում է մասնակցության հրավերի համար, ապա, ի լրումն, ծանուցումը ներառում է հետևյալ տեղեկատվությունը,

դ) դիտարկվող արտադրանքի և ծառայությունների բնույթը,

ե) հայտարարություն այն մասին, որ ծանուցումը համարվում է մասնակցության հրավեր:

Այնուամենայնիվ, երբ որակավորման համակարգի տևողությունը երեք տարի է կամ դրանից պակաս, և եթե համակարգի տևողությունը հստակ սահմանված է ծանուցման մեջ, ինչպես նաև հստակ սահմանված է այն փաստը, որ հետագայում ծանուցումներ չեն հրապարակվելու, բավարար է միայն մեկ անգամ հրապարակել ծանուցումը համակարգի սկզբում: Այդպիսի համակարգը չպետք է օգտագործվի այնպիսի ձևով, որը շրջանցում է սույն Համաձայնագրի դրույթները:

10. Եթե ցանկացած նախատեսված գնման մասնակցելու հրավերի հրապարակումից հետո, բայց նախքան ծանուցումներում կամ մրցառքի վերաբերյալ փաստաթղթերում սահմանված մրցառքների հայտերի բացման կամ ստացման ժամկետները, անհրաժեշտություն է առաջանում փոփոխել կամ վերահրապարակել ծանուցումը, փոփոխությունն ու վերահրապարակված ծանուցումը նույն կերպ են շրջանառվում, ինչպես փաստաթղթերի բնօրինակները, որոնց հիման վրա փոփոխությունը կատարվել է: Նախատեսված կոնկրետ գնման վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվություն, որ տրամադրվում է մեկ մատակարարի, պետք է միաժամանակ տրամադրվի բոլոր մյուս շահագրգիռ մատակարարներին ողջամիտ ժամկետներում՝ հնարավորություն ընձեռելով մատակարարներին քննության առնել այդ տեղեկատվությունը և արձագանքել դրան:

11. Սուբյեկտները հստակ սահմանում են սույն հոդվածում նշված ծանուցումներում կամ այն հրապարակումների մեջ, որոնցում հրապարակվում են ծանուցումները, որ գնումներն իրականացվում են սույն Համաձայնագրին համապատասխան:

Հոդված X Ընտրության ընթացակարգեր

1. Ընտրովի մրցառքային ընթացակարգերի ներքո առավելագույն արդյունավետ միջազգային մրցակցություն ապահովելու նպատակով յուրաքանչյուր նախատեսված գնման համար սուբյեկտները պետք է մրցառքների հրավիրեն գնումների համակարգի արդյունավետ գործողության հետ համատեղելի՝ առավելագույն քանակությամբ տեղական մատակարարների և այլ Կողմերի մատակարարների: Նրանք պարտավոր են ընթացակարգերին մասնակցելու համար մատակարարներին ընտրել անաչառ և ոչ խտրական կարգով:

2. Որակավորված մատակարարների մշտական ցուցակներ պահող սուբյեկտները կարող են մրցառքին հրավիրվող մատակարարներին ընտրել ցուցակագրվածների շարքից: Ցանկացած ընտրություն պետք է հավասար հնարավորություններ ընձեռի ցուցակագրված մատակարարներին:

3. Այն մատակարարները, ովքեր որևէ կոնկրետ նախատեսված գնման մասնակցելու հայտ են ներկայացնում, պետք է մրցառքային հայտ ներկայացնելու և քննության առնվելու թույլտվություն ունենան՝ այն պայմանով, որ դեռևս չորակավորված մատակարարները, VIII և IX հոդվածների համաձայն, բավարար ժամանակ ունեն որակավորման ընթացակարգն ավարտելու համար: Մասնակցելու թույլտվություն ստացած հավելյալ մատակարարների քանակը սահմանափակվում է միայն գնումների համակարգի արդյունավետ գործողությամբ:

4. Ընտրովի մրցառքի ընթացակարգերին մասնակցելու հայտերը կարող են ներկայացվել տեղեքսով, հեռագրով կամ ֆաքսով:

Հոդված XI Մրցառքի և մատակարարման ժամկետները

Ընդհանուր դրույթներ

1. ա) Ցանկացած սահմանված ժամկետ պետք է բավարար լինի, որ մյուս Կողմերի, ինչպես նաև տեղական մատակարարները հնարավորություն ունենան պատրաստելու և ներկայացնելու մրցառքային հայտեր նախքան մրցառքների ընթացակարգերի փակումը: Այդ ժամկետը սահմանելիս սուբյեկտները, իրենց խելամիտ կարիքներին համապատասխան, պարտավոր են հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են նախատեսված գնումների բարդությունը, ակնկալվող ենթապայմանագրերի ծավալները, ինչպես նաև մրցառքային հայտերը փոստով օտարերկրյա պետությունից կամ տեղական վայրերից փոխանցելու նորմալ տևողությունը:

բ) Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ իր սուբյեկտները պատշաճ կերպով հաշվի առնեն հրապարակման ուշացումները մրցառքների կամ մրցառքին հրավիրվելու դիմումների ստացման վերջնաժամկետ սահմանելիս:

Վերջնաժամկետներ

2. Բացառությամբ 3-րդ կետում նախատեսվածի՝

ա) բաց ընթացակարգերում հայտերի ընդունման ժամկետը չպետք է պակաս լինի 40 օրվանից՝ սկսած IX հոդվածի 1-ին կետում նշված ծանուցման հրապարակման օրվանից.

բ) ընտրովի ընթացակարգերում, որոնք չեն ներառում որակավորված մատակարարների մշտական ցուցակների օգտագործում, մրցառքներին հրավիրվելու համար դիմումների ներկայացման ժամկետը չպետք է պակաս լինի 25 օրվանից՝ սկսած IX հոդվածի 1-ին կետում նշված ծանուցման հրապարակման օրվանից. հայտերի ընդունման ժամկետը ոչ մի դեպքում չպետք է ավելի պակաս լինի, քան 40 օրը՝ մրցառքին մասնակցելու հրավերի ներկայացման օրվանից.

գ) այն ընտրովի ընթացակարգերում, որոնք ներառում են որակավորված մատակարարների մշտական ցուցակների օգտագործում, մրցառքային հայտերի ընդունման ժամկետը չպետք է 40 օրվանից պակաս լինի՝ մրցառքին մասնակցելու նախնական հրավերի ներկայացման օրվանից սկսած՝ մրցառքին մասնակցելու նախնական հրավերի ներկայացման օրվա՝ IX հոդվածի 1-ին կետում նշված ծանուցման հրապարակման օրվա հետ համընկնելուց անկախ:

3. 2-րդ կետում սահմանված ժամկետները կարող են կրճատվել հետևյալ հանգամանքներում.

ա) եթե առանձին ծանուցում է հրապարակվել ավելի շուտ, քան 40 օրվանից մինչև 12 ամիս, և ծանուցումը պարունակում է առնվազն հետևյալը՝

(i) IX հոդվածի 6-րդ կետում նշված տեղեկատվության առավելագույն հնարավոր ծավալը,

(ii) IX հոդվածի 8-րդ կետում նշված տեղեկատվությունը,

(iii) հայտարարություն այն մասին, որ շահագրգիռ մատակարարները պետք է սուբյեկտին իրենց հետաքրքրությունը հայտնեն գնման գործընթացի առնչությամբ,

(iv) սուբյեկտի հետ կապ պահպանող անձի կամ ստորաբաժանման նշումը՝ հետագայում տեղեկատվություն ստանալու համար,

մրցառքային հայտերի ընդունման 40-օրյա սահմանափակումը կարող է փոխարինվել այնպիսի ժամկետով, որը կբավարարի մրցառքին արձագանքելուն, որը, որպես ընդհանուր կանոն, չպետք է լինի 24 օրվանից պակաս, բայց ոչ մի դեպքում չպետք է լինի 10 օրվանից պակաս,

բ) IX հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ կրկնվող բնույթի պայմանագրերին առնչվող՝ երկրորդ և հաջորդող հրապարակումների դեպքում մրցառքային հայտերի ընդունման 40-օրյա ժամկետը կարող է կրճատվել՝ հասցվելով նվազագույնը 24 օրվա,

գ) այն դեպքում, եթե սուբյեկտի կողմից պատշաճ կերպով հիմնավորված հրատապությունը անհրազործելի է դարձնում խնդրո առարկա ժամկետները, 2-րդ կետում սահմանված ժամկետները կարող են կրճատվել, բայց ոչ մի դեպքում ոչ պակաս, քան 10 օր՝ IX հոդվածի 1-ին կետում նշված ծանուցման հրապարակման օրվանից սկսած,

դ) 2-րդ կետի «գ» ենթակետում նշված գնումների կատարման ժամկետները կարող են սահմանվել 2-րդ և 3-րդ Հավելվածներում թվարկված սուբյեկտների և ընտրված մատակարարների միջև՝ փոխադարձ համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում սուբյեկտը կարող է ժամկետներ սահմանել, որոնք բավարար կլինեն մրցառքներին արձագանքելու համար և ոչ մի դեպքում չեն լինի 10 օրվանից պակաս:

4. Սուբյեկտի սեփական խելամիտ կարիքների համապատասխան՝ առաքման ցանկացած ամսաթիվ պետք է հաշվի առնի այնպիսի գործոններ, ինչպիսիք են նախատեսված գնումների բարդությունը, ակնկալվող ենթապայմանագրերի ծավալները և արտադրության, ապրանքների ապապահեստավորման ու մատակարարման վայրերից փոխադրման կամ ծառայությունների մատուցման համար պահանջվող իրատեսական ժամկետները:

Հոդված XII

Մրցառքին վերաբերող փաստաթղթեր

1. Եթե մրցառքի ընթացակարգում սուբյեկտը թույլատրում է, որ մրցառքային հայտերը ներկայացվեն մի քանի լեզուներով, այդ լեզուներից մեկը պետք է լինի ԱՀԿ պաշտոնական լեզուներից մեկը:

2. Մատակարարներին տրամադրված մրցառքի վերաբերյալ փաստաթղթերը պետք է պարունակեն այն ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը, որը նրանց հնարավորություն կտա ներկայացնելու ընդունելի հայտ՝ ներառյալ այն տեղեկատվությունը, որը պահանջվում է հրապարակել նախատեսված գնումների վերաբերյալ ծանուցման մեջ (բացառությամբ IX հոդվածի 6-րդ կետի «գ» ենթակետի), և հետևալը.

ա) այն սուբյեկտի հասցեն, որին պետք է ուղարկվեն մրցառքային հայտերը,

բ) հասցե՝ հավելյալ տեղեկատվության պահանջներն ուղարկելու համար,

գ) այն լեզուն կամ լեզուները, որոնցով մրցառքային հայտերը և մրցառքային փաստաթղթերը պետք է ներկայացվեն,

դ) մրցառքային հայտերի ընդունումը փակելու ամսաթիվն ու ժամը և այն ժամանակահատվածը, որի ընթացքում ցանկացած մրցառքային հայտ պետք է բաց լինի ընդունման համար,

ե) այն անձանց տվյալները, որոնք լիազորված են ներկա գտնվելու մրցառքների բացմանը, և տվյալ բացման ամսաթիվը, ժամն ու վայրը,

զ) ցանկացած տնտեսական և տեխնիկական պահանջ, ֆինանսական երաշխիք և մատակարարներից պահանջվող տեղեկատվություն կամ փաստաթուղթ,

է) պահանջվող արտադրանքների կամ ծառայությունների ամբողջական նկարագրությունը կամ ցանկացած պահանջ՝ ներառյալ բավարարման ենթակա տեխնիկական մասնագրերը, համապատասխանության հավաստագրերը, անհրաժեշտ պլանները, գծագրերը և ուղեցուցային նյութերը,

ը) պայմանագիրը կնքելու չափանիշները, ներառյալ, գնից բացի, ցանկացած գործոն, որը հայտերի

գնահատման ժամանակ պետք է հաշվի առնվի և հայտի արժեքը գնահատելիս այնպիսի ծախսերի տարրեր, ինչպիսիք են փոխադրման, ապահովագրության և տեսչական ստուգումների ծախսերը, իսկ այլ Կողմերի արտադրանքի կամ ծառայությունների դեպքում՝ մաքսային տուրքերը և այլ ներկրման վճարումները, հարկերը և վճարման արժույթը,

թ) վճարման պայմանները,

ժ) ցանկացած այլ պայման,

ժա) համաձայն XVII հոդվածի՝ առկայության դեպքում՝ պայմաններ ու դրույթներ, որոնց ներքո սույն Համաձայնագրի կողմ չհանդիսացող, բայց սույն հոդվածի ընթացակարգերը կիրառող երկրների մրցառքային հայտերը պետք է ընդունվեն:

Սուբյեկտների կողմից մրցառքի վերաբերյալ փաստաթղթերի փոխանցում

2. ա) Բաց ընթացակարգերի ժամանակ, ընթացակարգին մասնակցող ցանկացած մատակարարի խնդրանքով, սուբյեկտները պետք է փոխանցեն մրցառքի վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաև պետք է անհապաղ պատասխանեն դրանց հետ կապված բացատրությունների ցանկացած խելամիտ պահանջի,

բ) ընտրովի ընթացակարգերի ժամանակ, ընթացակարգին մասնակցելու ցանկություն հայտնած ցանկացած մատակարարի խնդրանքով, սուբյեկտները պետք է փոխանցեն մրցառքի վերաբերյալ փաստաթղթերը և պետք է անհապաղ պատասխանեն դրանց հետ կապված բացատրությունների ցանկացած խելամիտ պահանջի,

գ) սուբյեկտներն անհապաղ պատասխանում են մրցառքի ընթացակարգին մասնակցող մատակարարների՝ ցանկացած համապատասխան տեղեկատվություն տրամադրելու խելամիտ պահանջին՝ պայմանով, որ պայմանագրի շնորհման գործընթացում նման տեղեկատվությունը մատակարարին առավելություն չտա իր մրցակիցների նկատմամբ:

Հոդված XIII

Մրցառքային հայտերի ներկայացում, ընդունում և բացում, ինչպես նաև պայմանագրերի շնորհում

1. Մրցառքային հայտերի ներկայացումը, ընդունումը և բացումը, ինչպես նաև պայմանագրերի շնորհումը պետք է համապատասխանեն հետևյալին.

ա) մրցառքային հայտերը սովորաբար պետք է ներկայացվեն գրավոր՝ ուղղակիորեն կամ փոստով: Եթե տելեքսով, հեռագրով կամ ֆաքսով մրցառքային հայտերի ներկայացումը թույլատրվում է, այդպիսի հայտերը պետք է ներառեն մրցառքի գնահատման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը, մասնավորապես՝ հայտատուի կողմից առաջարկված վերջնական գինը և հայտարարություն այն մասին, որ հայտատուն համաձայնում է մրցառքին մասնակցելու: Իրավերի բոլոր ժամկետներին, պայմաններին ու դրույթներին: Մրցառքն անհապաղ պետք է հաստատվի նամակով կամ տելեքսի, հեռագրի կամ ֆաքսի ստորագրված կրկնօրինակի միջոցով: Հեռախոսով ներկայացված մրցառքները չեն թույլատրվում: Տելեքսի, հեռագրի կամ ֆաքսի բովանդակությանը պետք է գերակայություն տրվի այն դեպքում, եթե սահմանված ժամկետից հետո ստացված ցանկացած փաստաթղթի և տելեքսի, հեռագրի կամ ֆաքսի բովանդակության միջև տարբերություն կամ հակասություն առաջանա, և

բ) մրցառքային հայտերի բացումից մինչև պայմանագրերի շնորհման պահը չկանխամտածված ձևական սխալներն ուղղելու համար հայտատուներին տրվելիք հնարավորությունները չպետք է առաջացնեն որևէ խտրականություն:

Մրցառքային հայտերի ընդունում

2. Մատակարարը չպետք է տուժի, եթե հայտը մրցառքային փաստաթղթերում նշված գրասենյակի կողմից ստացվում է սահմանված ժամկետից հետո՝ բացառապես սուբյեկտի մեղքով ուշացման պատճառով: Մրցառքային հայտերը կարող են դիտարկվել նաև այլ բացառիկ հանգամանքներում, եթե համապատասխան սուբյեկտի ընթացակարգերն այդ բանը նախատեսում են:

Մրցառքային հայտերի բացում

3. Բաց կամ ընտրովի ընթացակարգերի ներքո սուբյեկտների կողմից պահանջված բոլոր մրցառքային հայտերը պետք է ընդունվեն ու բացվեն բացումների օրինականությունը երաշխավորող ընթացակարգերին կամ պայմաններին համապատասխան: Մրցառքային հայտերի բացումն ու ընդունումը պետք է նաև համապատասխանի սույն Համաձայնագրի ազգային մոտեցման և անխտրականության դրույթներին: Մրցառքային հայտերի բացման վերաբերյալ տեղեկատվությունը մնում է սուբյեկտի մոտ և վերադաս պատասխանատու մարմինների տրամադրության տակ, որպեսզի այն անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի օգտագործել XVIII, XIX, XX և XXII հոդվածների ընթացակարգերի ներքո:

Պայմանագրերի շնորհում

1. ա) Պայմանագրի շնորհման նպատակով քննարկվելու համար բացման պահին մրցառքային հայտը պետք է համապատասխանի ծանուցումների կամ մրցառքի վերաբերյալ փաստաթղթերի էական պահանջներին և ներկայացված լինի այնպիսի մատակարարի կողմից, որը համապատասխանում է մասնակցության պայմաններին: Եթե սուբյեկտն ստացել է ներկայացված այլ մրցառքային հայտերի համեմատ անսովոր ցածր հայտ, ապա սուբյեկտը կարող է հայտատուին հարցում կատարել՝ հավաստիանալու համար՝ այն համապատասխանում է

մասնակցության պայմաններին և ի վիճակի՞ է իրականացնելու պայմանագրի պայմանները:

բ) Բացառությամբ այն դեպքերի, երբ, հանրային շահերից ելնելով, սուբյեկտը որոշում է կայացնում պայմանագիրը չկնքել, սուբյեկտը պայմանագիրը շնորհում է այն հայտատուին, որն ամբողջապես կարողունակ է համարվել ստանձնելու պայմանագրի կատարումը, և որի մրցառքային հայտերը՝ վերաբերեն տեղական, թե այլ Կողմերի արտադրանքին կամ ծառայություններին, կա՞մ ամենացածրն են, կա՞մ էլ ճանաչվել են ամենաշահավետը՝ ծանուցումներում կամ մրցույթի վերաբերյալ փաստաթղթերում հատուկ գնահատման չափանիշների համաձայն:

գ) Շնորհումները կատարվում են մրցառքի վերաբերյալ փաստաթղթերում սահմանված չափանիշների և էական պահանջների համաձայն:

Տարբերակներ

2. Տարբերակների վերաբերյալ դրույթները չպետք է օգտագործվեն սույն Համաձայնագիրը շրջանցող ձևով:

Հոդված XIV Բանակցություն

1. Կողմը կարող է սուբյեկտներին բանակցությունների հնարավորություն ընձեռել հետևյալ պարագաներում.

ա) գնումների համատեքստում, որում նրանք նշել են իրենց մտադրության մասին, այսինքն՝ IX հոդվածի 2-րդ կետում նշված ծանուցման մեջ (առաջարկվող գնումների ընթացակարգերին մասնակցության հրավեր մատակարարներին), կամ

բ) այն պարագայում, երբ գնահատման արդյունքում պարզվում է, որ մրցառքային հայտերից և ոչ մեկը բացահայտ կերպով ամենաշահավետը չէ ծանուցումներում կամ մրցառքի վերաբերյալ փաստաթղթերում սահմանված կոնկրետ գնահատման չափանիշների տեսանկյունից:

2. Բանակցություններն առաջին հերթին վարվում են մրցառքային հայտի թույլ և ուժեղ կողմերը բացահայտելու համար:

3. Մրցառքային հայտերը պետք է սուբյեկտների կողմից դիտարկվեն գաղտնիության պայմաններում: Մասնավորապես, նրանք չպետք է տրամադրեն այնպիսի տեղեկատվություն, որը նպատակ կհետապնդի օգնելու կոնկրետ մասնակիցների իրենց մրցառքային հայտի մակարդակը բարձրացնել և հասցնել այլ մասնակիցների մրցառքային հայտերի մակարդակին:

4. Բանակցությունների ընթացքում սուբյեկտները չպետք է խտրականություն դնեն տարբեր մատակարարների միջև: Մասնավորապես, նրանք պետք է ապահովեն հետևյալը.

ա) ցանկացած մասնակցի դուրս թողնելն իրականացվում է ծանուցումներում կամ մրցույթի վերաբերյալ փաստաթղթերում սահմանված չափանիշների համաձայն,

բ) բանակցություններում ընդգրկված բոլոր մնացած մասնակիցներին գրավոր փոխանցվում են չափանիշներում և տեխնիկական պահանջներում կատարված փոփոխությունները,

գ) մնացած բոլոր մասնակիցներին հնարավորություն է ընձեռվում ներկայացնելու նոր կամ փոփոխությունների ենթարկված փաթեթներ վերանշակված պահանջների հիման վրա, և

դ) երբ բանակցություններն ավարտված են, բանակցություններում մնացած բոլոր մասնակիցներին թույլատրվում է ներկայացնելու վերջնական մրցառքային հայտեր՝ ընդհանուր ժամկետներին համապատասխան:

Հոդված XV Սահմանափակ մրցառք

1. Մրցառքի բաց և ընտրովի ընթացակարգերը կարգավորող VII-XIV հոդվածների դրույթները անհրաժեշտաբար չեն կիրառվում հետևյալ պարագաներում՝ պայմանով, որ սահմանափակ մրցառքը չի օգտագործվի հնարավոր առավելագույն մրցակցությունից խուսափելու նպատակով կամ այնպիսի ձևով, որը հնարավորություն կստեղծի խտրականություն դնելու այլ Կողմերի մատակարարների միջև կամ պաշտպանելու տեղական արտադրողներին կամ մատակարարներին.

ա) բաց կամ ընտրովի մրցառքի համար մրցառքային հայտերի բացակայության դեպքում, կամ երբ ներկայացված մրցառքային հայտերը համաձայնեցված են եղել կամ չեն համապատասխանել մրցառքի էական պահանջներին կամ ներկայացվել են այնպիսի մատակարարների կողմից, որոնք չեն համապատասխանում սույն Համաձայնագրով նախատեսված պայմաններին՝ այդուամենայնիվ այն պայմանով, որ շնորհվելու ժամանակ պայմանագրում նախնական մրցառքի պահանջները էականորեն չեն փոփոխվել,

բ) երբ արվեստի գործերի կամ բացառիկ իրավունքների, ինչպիսիք են արտոնագրերը կամ հեղինակային իրավունքները, պաշտպանության համար կամ տեխնիկական պատճառներով մրցակցության բացակայության դեպքում արտադրանքն ու ծառայությունները կարող են մատակարարվել միայն կոնկրետ մատակարարի կողմից, և ոչ մի պատշաճ այլընտրանք կամ փոխարինող առկա չէ,

գ) խիստ անհրաժեշտության դեպքում, երբ սուբյեկտի կողմից անկանխատեսելի իրադարձություններից առաջացած ծայրահեղ իրատարության պատճառով արտադրանքն ու ծառայությունները չէին կարող ժամանակին ձեռք բերվել բաց կամ ընտրովի մրցույթային ընթացակարգերի միջոցով,

դ) նախնական մատակարարի կողմից հավելյալ առաքումները, որոնք նախատեսված են կա՞մ որպես առկա պարագաների կամ տեղակայումների փոխարինող մասեր, կա՞մ որպես առկա պաշարների, ծառայությունների կամ տեղակայումների լրացում, որտեղ մատակարարի փոփոխությունը կհանգեցնի այնպիսի սարքավորումների կամ ծառայությունների մատակարարման, որոնք չեն համապատասխանում արդեն իսկ առկա սարքավորումների կամ ծառայությունների փոխադարձաբար փոխարինելիության պահանջներին՝ ,

ե) երբ սուբյեկտը գնում է նախատիպեր կամ նոր արտադրանք կամ ծառայություններ, որոնք մշակվել են համաձայն իր խնդրանքի, մասնավորապես՝ հետազոտության, փորձի, ուսումնասիրության կամ բնօրինակի մշակման համար կոնկրետ պայմանագիր: Նմանատիպ պայմանագրերի ավարտի դեպքում ապրանքների կամ ծառայությունների հաջորդ գնումները ենթակա են VII-XIV հոդվածների դրույթներին⁶,

զ) երբ հավելյալ շինարարական ծառայությունները, որոնք ներառված չէին սկզբնական պայմանագրում, բայց որոնք սկզբնական մրցառթի վերաբերյալ փաստաթղթերում ներառված նպատակների շրջանակներում էին, անկանխատեսելի հանգամանքներից ելնելով՝ անհրաժեշտ են դարձել՝ ավարտելու համար այնտեղ ներկայացված շինարարական ծառայությունները, իսկ սուբյեկտին անհրաժեշտ է պայմանագրեր շնորհել քննարկվող շինարարական ծառայություններն իրականացնող կապալառուի հետ հավելյալ շինարարական ծառայությունների համար, քանի որ հավելյալ շինարարական ծառայությունները սկզբնական պայմանագրերից տարանջատումը դժվարություն կառաջացնի տեխնիկական և տնտեսական պատճառներով և սուբյեկտին էական անհարմարություն կպատճառի: Այդուհանդերձ, հավելյալ շինարարական ծառայությունների համար շնորհված պայմանագրերի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի հիմնական պայմանագրի գումարի 50 տոկոսը,

է) նոր շինարարական ծառայությունների համար, որոնք բաղկացած են նմանատիպ շինարարական ծառայությունների կրկնությունից, որոնք համապատասխանում են VII-XIV հոդվածների համաձայն շնորհված սկզբնական պայմանագրի հիմնական նախագծին, որի համար սուբյեկտը նշել է սկզբնական շինարարական ծառայություններին առնչվող նախատեսված գնումների ծանուցման մեջ, որ սահմանափակ մրցառթային ընթացակարգեր կարող են օգտագործվել այդպիսի նոր շինարարական ծառայությունների համար պայմանագրեր շնորհելիս,

ը) ապրանքային շուկայում գնված արտադրանքների համար,

թ) այնպիսի բացառիկ շահավետ պայմաններով գնված ապրանքների համար, որոնք առաջանում են միայն շատ կարճ ժամկետով: Սույն դրույթը նախատեսված է մատակարար չհանդիսացող ընկերությունների ոչ սովորական օտարումների կամ լուծարման ընթացակարգի մեջ գտնվող ձեռնարկությունների ունեցվածքի օտարման կամ կառավարման դեպքերի համար: Այն չի ներառում կանոնավոր մատակարարներից սովորական գնումները,

ժ) նախագծերի մրցույթում հաղթողին պայմանագրեր շնորհելու դեպքում՝ պայմանով, որ մրցույթը կազմակերպվել է սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, հատկապես կապված, պատճառ կերպով որակավորված մատակարարների՝ նման մրցույթի մասնակցելու հրավերի հրապարակման հետ՝ IX հոդվածի իմաստով, որը պետք է գնահատվի անկախ ժյուրիի կողմից՝ նպատակ հետապնդելով մշակելու հաղթողների հետ կնքվելիք պայմանագրեր:

2. Սուբյեկտները պետք է պատրաստեն գրավոր զեկույց 1-ին կետի դրույթներին համապատասխան կնքված յուրաքանչյուր պայմանագրի վերաբերյալ: Յուրաքանչյուր զեկույց պետք է պարունակի գնող սուբյեկտի անունը, գնված ապրանքների կամ ծառայությունների տեսակն ու արժեքը, ծագման երկիրը, և՛ հայտարարություն այն պայմանների մասին, որոնք գերակայել են՝ սույն հոդվածի համաձայն: Սույն զեկույցը մնում է սուբյեկտի մոտ և վերադաս պատասխանատու մարմինների տրամադրության տակ, որպեսզի այն անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի օգտագործել XVIII, XIX, XX և XXII հոդվածների ընթացակարգերի ներքո:

⁵ «Առկա սարքավորումը» ներառում է ծրագրային ապահովում այնքանով, որքանով ծրագրային ապահովման նախնական գնումը իրականացվել է Համաձայնագրի ներքո:

⁶ Նոր արտադրանքի կամ ծառայության նախնական մշակումը կարող է ներառել սահմանափակ արտադրություն կամ մատակարարում՝ տեղում փորձարկման արդյունքները միավորելու համար, ինչպես նաև ցուցադրելու համար այն փաստը, որ արտադրանքը կամ ծառայությունը հարմար է պահանջվող քանակությամբ արտադրելու կամ մատակարարելու համար և որ համապատասխանում է ընդունելի որակի չափանիշներին: Այն չի տարածվում մեծաքանակ արտադրանքի կամ մատակարարման վրա՝ հաստատելու համար դրա առևտրային կենսունակությունը կամ վերադարձնելու հետազոտության կամ մշակման վրա կատարված ծախսերը:

Հոդված XVI Հատուցումներ

1. Մատակարարների, արտադրանքի կամ ծառայությունների որակավորման և ընտրության ընթացքում կամ մրցառթների հայտերի գնահատման և պայմանագրերի շնորհման ընթացքում սուբյեկտները չպետք է հատուցումներ պարտադրեն, պահանջեն կամ նախատեսեն⁷:

2. Այնուամենայնիվ, հաշվի առնելով ընդհանուր քաղաքականության նկատառումները, ներառյալ զարգացման առնչվողները, զարգացող երկիրը կարող է միանալու ժամանակ բանակցել հատուցումներ օգտագործելու պայմանների շուրջ, ինչպիսիք, օրինակ, պատրաստի արտադրանքում տեղական ծագման որոշակի նյութեր և պահեստամասեր ընդգրկելու պահանջներն են: Այդպիսի պահանջները պետք է օգտագործվեն միայն գնման գործընթացում մասնակցելու որակավորման համար և ոչ որպես պայմանագրերի շնորհման չափանիշ: Պայմանները պետք է լինեն օբյեկտիվ, հստակ սահմանված և ոչ խտրական: Դրանք սահմանված պետք է լինեն երկրի I Առդիրում և կարող են ներառել հատուցումների վերաբերյալ ճշգրիտ սահմանափակումներ սույն Համաձայնագրին ենթակա ցանկացած պայմանագրում: Հանձնաժողովը պետք է տեղեկացվի նման պայմանների առկայության մասին, ինչպես նաև այդ պայմանները պետք է ներառված լինեն նախատեսված գնումների ծանուցումների և այլ փաստաթղթերի մեջ:

⁷ Պետական գնումների հատուցումները միջոցներ են, որոնք օգտագործվում են տեղական զարգացումը խթանելու կամ վճարային հաշվեկշիռը բավարարելու համար՝ պատրաստի արտադրանքում տեղական ծագման նյութերի և պահեստամասերի ընդգրկման, տեխնոլոգիաների լիցենզավորման, ներդրումային պահանջների և նմանատիպ պահանջների միջոցով:

Հոդված XVII Թափանցիկություն

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է խրախուսի սուբյեկտներին՝ նշել պայմաններ, ներառյալ մրցառթւների մրցակցային ընթացակարգերի կամ բողոքարկման ընթացակարգերի հասանելիության ցանկացած տարբերությունը, որոնց համաձայն կդիտարկվեն սույն Համաձայնագրի կողմ չհանդիսացող երկրների մատակարարների մրցառթւային հայտերը, բայց նպատակ ունենալով ապահովելու իրենց իսկ պայմանագրերի շնորհման թափանցիկությունը՝ այնուամենայնիվ՝

ա) պետք է սահմանեն իրենց պայմանագրերի բնութագրերը՝ VI հոդվածի համաձայն (տեխնիկական մասնագրեր),

բ) պետք է հրապարակեն IX հոդվածում նշված գնումների վերաբերյալ ծանուցումները՝ ներառյալ IX հոդվածի 8-րդ կետում նշված ծանուցումը (նախատեսված գնումների ծանուցման ամփոփագիր), որը հրապարակված է ԱՀԿ-ի որևէ պաշտոնական լեզվով, այն պայմանների նշումը, որենց համաձայն կդիտարկվեն Կողմ հանդիսացող երկրներում տեղակայված մատակարարների մրցառթւային հայտերը,

գ) պետք է ապահովեն, որ գնումների վերաբերյալ կանոնակարգերը սովորաբար փոփոխության չենթարկվեն գնման գործընթացի ժամանակ. իսկ եթե այդպիսի փոփոխությունը անխուսափելի լինի, երաշխավորեն դրանց շտկման բավարար միջոցների առկայությունը:

2. Պայմանագրին կողմ չհանդիսացող կառավարությունները, որոնք համապատասխանում են 1-ին կետի «ա»-«գ» ենթակետերում սահմանված պայմաններին, Կողմերին տեղեկացնելուց հետո իրավունք կունենան որպես դիտորդներ մասնակցելու Հանձնաժողովի աշխատանքներին:

Հոդված XVIII

Սուբյեկտների պարտավորություններին առնչվող տեղեկատվություն և վերահսկողություն

1. Սուբյեկտները պետք է ծանուցում հրապարակեն II Առդիրում նշված հրապարակման մեջ, XIII- XV հոդվածների համաձայն, յուրաքանչյուր պայմանագրի շնորհումից հետո 72 օրվանից ոչ ուշ: Այս ծանուցումները պետք է պարունակեն հետևյալը.

ա) այն արտադրանքների և ծառայությունների բնույթն ու քանակը, որոնց համար շնորհվել է պայմանագիրը,

բ) պայմանագիրը շնորհող սուբյեկտի հասցեն և անունը,

գ) շնորհման ամսաթիվը,

դ) մրցառթւի հաղթող հայտատուի անունն ու հասցեն,

ե) հաղթող հայտատուի պայմանագրի արժեքը կամ ամենաբարձր և ամենացածր առաջարկը, որը հաշվի է առնվել պայմանագիրը շնորհելիս,

զ) անհրաժեշտության դեպքում IX հոդվածի 1-ին կետի համաձայն հրապարակված ծանուցման նույնացման միջոցները կամ, XV հոդվածի համաձայն, այդ ընթացակարգի օգտագործման հիմնավորումը, և

է) օգտագործված ընթացակարգի տեսակը:

2. Յուրաքանչյուր սուբյեկտ մի Կողմի մատակարարի դիմումի հիման վրա պետք է անհապաղ տրամադրի.

ա) գնումներին առնչվող՝ իր գործելակերպի և ընթացակարգի վերաբերյալ բացատրություն,

բ) մատակարարի՝ որակավորման նպատակով դիմումի մերժման, առկա որակավորման դադարեցման և չընտրվելու պատճառների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն,

գ) հաջողության չհասած հայտատուին՝ համապատասխան տեղեկատվություն այն պատճառների մասին, թե ինչու իր մրցառթւային հայտը չի ընտրվել, հաղթող հայտի բնութագրերի և հարաբերական առավելությունների, ինչպես նաև հաղթող հայտատուի անվան մասին տեղեկատվություն:

3. Սուբյեկտները պետք է անհապաղ տեղեկացնեն մասնակից մատակարարներին պայմանագրերի շնորհման վերաբերյալ որոշումների մասին, իսկ պահանջի դեպքում՝ գրավոր:

4. Այնուամենայնիվ, սուբյեկտները կարող են որոշել չտրամադրել 1-2-րդ կետերում նշված պայմանագրերի շնորհման վերաբերյալ որոշակի տեղեկատվություն այդ դեպքերում, երբ նման տեղեկատվության բացահայտումը կխոչընդոտի օրենքի կիրարկմանը կամ այլ կերպ կհակադրվի հանրային շահին կամ վնաս կհասցնի պետական կամ մասնավոր կոնկրետ ձեռնարկությունների օրինական առևտրային շահին կամ կարող է վնասել մատակարարների միջև արդար մրցակցությանը:

Հոդված XIX

Կողմերի պարտավորություններին առնչվող տեղեկատվություն և վերահսկողություն

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է անհապաղ հրապարակի սույն Համաձայնագրի նախատեսված պետական գնումների վերաբերյալ ցանկացած օրենք, կանոնակարգ, դատական վճիռ, ընդհանուր կիրառման վարչական որոշում և ցանկացած ընթացակարգ (ներառյալ տիպային պայմանագրային դրույթները) IV Առդիրում թվարկված համապատասխան հրապարակումներում և այնպիսի ձևով, որը թույլ կտա մյուս Կողմերին և մատակարարներին ծանոթանալու դրանց: Կողմերից յուրաքանչյուրը պետք է պատրաստ լինի ցանկացած այլ Կողմի, պահանջի դեպքում, բացատրելու իր պետական գնումների ընթացակարգերը:

2. Հաջողության չհասած հայտատուի կառավարությունը, որը սույն Համաձայնագրի Կողմ է, կարող է, առանց ազդելու XXVII հոդվածի դրույթների վրա, խնդրել պայմանագրերի շնորհման վերաբերյալ այնպիսի հավելյալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է հավաստիանալու համար, որ գնումները արդար և անկողմնակալ ձևով են իրականացվել: Այդ նպատակով գնող սուբյեկտի կառավարությունը պետք է տեղեկատվություն տրամադրի թե՛ հաղթող հայտի բնութագրերի և հարաբերական առավելությունների, թե՛ պայմանագրի գնի վերաբերյալ: Սովորաբար այս վերջին տեղեկատվությունը կարող է հրապարակվել հաջողության չհասած հայտատուի կառավարության կողմից՝ պայմանով, որ նա կկիրառի այդ իրավունքը շրջահայաց կերպով: Այն դեպքում, երբ այս տեղեկատվության հրապարակումը հետագա մրցառթւներում կարող է վնաս հասցնել մրցակցությանը, այն չպետք է

է հրապարակվի՝ բացառությամբ հաջողության չհասած հայտատուի կառավարության և տեղեկատվություն տրամադրող Կողմի խորհրդակցության և վերջինի համաձայնության դեպքի:

3. Խնդրանքի դեպքում ցանկացած այլ Կողմի պետք է տրամադրվի տեղեկատվություն սուբյեկտների կողմից գնումների և նրանց անհատական պայմանագրերի շնորհման վերաբերյալ:

4. Ցանկացած Կողմի տրամադրած գաղտնի տեղեկատվությունը, որի բացահայտումը կխոչընդոտի օրենքի կիրարկմանը կամ այլ կերպ կհակասի հանրային շահերին կամ կվնասի որոշակի պետական կամ մասնավոր ձեռնարկությունների օրինական առևտրային շահին, ինչպես նաև մատակարարների միջև արդար մրցակցությանը, չպետք է հրապարակվի առանց տեղեկատվությունը տրամադրող Կողմի պաշտոնական թույլտվության:

5. Յուրաքանչյուր Կողմ պետք է կազմի և Հանձնաժողովին տրամադրի սույն Համաձայնագրով նախատեսված՝ իր գնումների վերաբերյալ տարեկան վիճակագրություն: Այդ գեկույցները պետք է պարունակեն սույն Համաձայնագրով նախատեսված բոլոր գնող սուբյեկտների կողմից շնորհված պայմանագրերի հետ կապված հետևյալ տեղեկատվությունը.

ա) 1-ին Հավելվածում նշված սուբյեկտների համար՝ արժեքի շեմից և՛ բարձր, և՛ ցածր շնորհված պայմանագրերի գնահատված արժեքի վերաբերյալ ընդհանուր և ըստ սուբյեկտի դասակարգված վիճակագրությունը, 2-րդ և 3-րդ Հավելվածների սուբյեկտների համար՝ արժեքի շեմից բարձր շնորհված պայմանագրերի առնչությամբ գնահատված արժեքի վերաբերյալ ընդհանուր և ըստ սուբյեկտների տեսակների դասակարգված վիճակագրությունը,

բ) 1-ին Հավելվածում նշված սուբյեկտների համար՝ արժեքի շեմից բարձր շնորհված պայմանագրերի քանակի և ընդհանուր արժեքի վերաբերյալ վիճակագրությունը՝ դասակարգված ըստ սուբյեկտների և ըստ միատեսակ դասակարգման համակարգի դասակարգված արտադրանքների ու ծառայությունների տեսակների, 2-րդ և 3-րդ Հավելվածների սուբյեկտների համար՝ արժեքի շեմից բարձր շնորհված պայմանագրերի գնահատված արժեքի վերաբերյալ վիճակագրությունը՝ դասակարգված ըստ սուբյեկտների և արտադրանքի ու ծառայությունների տեսակների,

գ) 1-ին Հավելվածում նշված սուբյեկտների համար՝ XV հոդվածի յուրաքանչյուր դեպքի ներքո կնքված պայմանագրերի քանակի և ընդհանուր արժեքի վերաբերյալ վիճակագրությունը՝ դասակարգված ըստ սուբյեկտների և արտադրանքի ու ծառայությունների տեսակների, 2-րդ և 3-րդ Հավելվածներում նշված սուբյեկտների համար՝ արժեքի շեմից բարձր կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքի վերաբերյալ վիճակագրությունը՝ XV հոդվածի յուրաքանչյուր դեպքի ներքո, և

դ) 1-ին Հավելվածում նշված սուբյեկտների համար՝ համապատասխան հավելվածներում ներառված՝ Համաձայնագրի շեղումների ներքո շնորհված պայմանագրերի քանակի և ընդհանուր արժեքի վերաբերյալ վիճակագրությունը՝ դասակարգված ըստ սուբյեկտների, 2-րդ և 3-րդ Հավելվածներում նշված սուբյեկտների տեսակների համար՝ համապատասխան հավելվածներում ներառված Համաձայնագրի շեղումների ներքո շնորհված պայմանագրերի քանակի և ընդհանուր արժեքի վերաբերյալ վիճակագրությունը:

Յուրաքանչյուր Կողմ պետք է տրամադրի վիճակագրություն իր սուբյեկտների կողմից գնված արտադրանքների և ծառայությունների ծագման երկրի վերաբերյալ այդ տեղեկատվության առկայության չափով: Նպատակ ունենալով ապահովելու, որ այդ վիճակագրությունը համեմատելի լինի՝ Հանձնաժողովը օգտագործվելիք մեթոդների վերաբերյալ ուղեցույց կտրամադրի: Նպատակ ունենալով ապահովելու սույն Համաձայնագրով նախատեսված գնումների արդյունավետ վերահսկողությունը, Հանձնաժողովը կարող է միաձայն որոշումով փոփոխել «ա»-«դ» ենթակետերի պահանջները, որոնք առնչվում են տրամադրվելիք վիճակագրական տեղեկատվության էությանն ու ծավալին, ինչպես նաև օգտագործվելիք վերլուծություններին ու դասակարգումներին:

Հոդված XX **Բողոքարկման ընթացակարգեր**

Խորհրդակցություններ

1. Եթե մատակարարը զանգատ է ներկայացնում, որ որևէ գնման համատեքստում խախտվել է սույն Համաձայնագիրը, յուրաքանչյուր Կողմ խրախուսում է, որ մատակարարն իր զանգատը լուծի գնող սուբյեկտի հետ խորհրդակցության միջոցով: Այդ դեպքում գնող սուբյեկտը պետք է անկողմնակալ և ժամանակին քննության առնի զանգատն այն կարգով, որ չազդի Բողոքարկման համակարգի ներքո նախատեսված ուղղիչ միջոցառումների իրականացման վրա:

Բողոքարկում

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է ոչ խտրական, արագ, թափանցիկ և արդյունավետ ընթացակարգեր՝ հնարավորություն ընձեռելով մատակարարներին բողոք ներկայացնելու Համաձայնագրի ենթադրվող խախտումների վերաբերյալ, որոնք առաջացել են այն գնումների համատեքստում, որոնցում նրանք ունեն կամ ունեցել են շահագրգռվածություն:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է գրավոր բողոքարկման ընթացակարգերը և դրանք դարձնում ընդհանուր առմամբ հասանելի:

4. Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ սույն Համաձայնագրով նախատեսված գնումներին առնչվող գործընթացի բոլոր կողմերին վերաբերող փաստաթղթերը կպահվեն երեք տարի ժամկետով:

5. Շահագրգիռ մատակարարը կարող է նախաձեռնել բողոքարկման ընթացակարգ և սահմանված ժամկետներում ծանուցել գնող սուբյեկտին այն ժամանակից սկսած, երբ բողոքի հիմքն արդեն իսկ հայտնի է կամ ողջամտորեն պիտի հայտնի լիներ, բայց ոչ մի դեպքում՝ 10 օրից պակաս ժամանակահատվածում:

6. Բողոքները քննվելու են դատարաններում կամ անկողմնակալ և անկախ՝ վերստուգող մարմնի կողմից, որը շահագրգռված չէ գնումների արդյունքների մեջ, և որի անդամները պաշտոնավարության ընթացքում պաշտպանված են արտաքին ազդեցությունից: Դատարան չհանդիսացող վերստուգող մարմինը կա՛մ ենթակա է դատական վերանայման, կա՛մ պետք է իրականացնի ընթացակարգեր, որոնք ապահովում են հետևյալը.

- ա) մասնակիցներին կարող է լսել, նախքան կարծիք հայտնելը կամ որոշում կայացնելը,
- բ) մասնակիցները կարող են ներկայացված լինել և ուղեկցվել,
- գ) բոլոր ընթացակարգերը հասանելի կլինեն մասնակիցներին,
- դ) ընթացակարգերը կարող են լինել դռնբաց,
- ե) որոշումներն ու կարծիքները տրվում են գրավոր՝ որոշումների կամ կարծիքների հիմնավորման

նկարագրությամբ,

- ե) կարող են քննվել վկաներ,
- զ) փաստաթղթերը ներկայացվում են վերստուգող մարմնին:

7. Բողոքարկման ընթացակարգերը պետք է ապահովեն հետևյալը.

ա) հրատապ միջանկյալ միջոցառումներ՝ Համաձայնագրի խախտումներն ուղղելու և առևտրային հնարավորությունները պահպանելու համար: Նման գործողությունը կարող է հանգեցնել գնումների գործընթացի կասեցման: Այդուհանդերձ, ընթացակարգերը կարող են նախատեսել, որ խնդրո առարկա շահերի, այդ թվում՝ հանրային շահի վրա կարևորագույն բացասական հետևանքները հաշվի առնվեն՝ որոշելու համար, թե արդյոք նման միջոցառումներ պետք է կիրառել, թե ոչ: Այդ դեպքում, միջոցներ չձեռնարկվել պետք է հիմնավորվի գրավոր,

բ) բողոքի հիմնավորվածության գնահատում և դրա վերաբերյալ որոշման հնարավորություն,

գ) Համաձայնագրի խախտման ուղղում կամ կրած կորուստների կամ վնասների փոխհատուցում, որոնք կարող են սահմանափակվել մրցառքի նախապատրաստման կամ բողոքի վրա կատարված ծախսերով:

8. Առևտրային և այլ ներգրավված շահեր պաշտպանելու նպատակով բողոքարկման ընթացակարգը պետք է, որպես կանոն, ժամանակին ավարտվի:

Հոդված XXI Հաստատություններ

1. Հիմնվում է Պետական գնումների հանձնաժողով՝ կազմված Կողմերից յուրաքանչյուրի ներկայացուցիչներից: Հանձնաժողովն ընտրում է իր նախագահին ու փոխնախագահին և գումարվում է ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ հնարավորություն ընձեռելով Կողմերին խորհրդակցելու սույն Համաձայնագրի գործողությանն առնչվող ցանկացած հարցի կամ դրա նպատակների իրականացման շուրջ, ինչպես նաև՝ իրականացնել այլ պարտականություններ, որ Կողմերը կարող են նրան հանձնարարել:

2. Հանձնաժողովը կարող է հիմնել աշխատանքային խմբեր կամ այլ օժանդակ մարմիններ, որոնք կիրականացնեն Հանձնաժողովի կողմից իրենց տրված գործառնությունները:

Հոդված XXII Խորհրդակցություններ և վեճերի կարգավորում

1. ԱՀԿ Համաձայնագրի շրջանակներում՝ «Վեճերի կարգավորումը ղեկավարող կանոնների և ընթացակարգերի մասին փոխհամաձայնության» (այսուհետ՝ «Վեճերի կարգավորման փոխհամաձայնություն») դրույթները կիրառելի են ստորև սահմանված բացառություններով:

2. Եթե որևէ Կողմ համարում է, որ սույն Համաձայնագրից ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր համար բխող որևէ առավելություն վերացվում է կամ նվազեցվում, կամ որ սույն Համաձայնագրի նպատակներին հասնելը խոչընդոտվում է մեկ ուրիշ Կողմի կամ Կողմերի՝ սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու հետևանքով, կամ որ Կողմը կամ Կողմերը կիրառել են որևէ միջոց՝ անկախ նրանից՝ դա հակասում է սույն Համաձայնագրի դրույթներին, թե ոչ, այդ Կողմը կարող է, նպատակ ունենալով հասնելու խնդրի փոխադարձաբար բավարար կարգավորման, մյուս Կողմին կամ Կողմերին, որոնց նա շահագրգիռ է համարում, ներկայացնել գրավոր դիմումներ կամ առաջարկություններ: Վեճերի կարգավորման փոխհամաձայնության ներքո հիմնադրված Վեճերի կարգավորման մարմինը (այսուհետ՝ ՎԿՄ) պետք է անհապաղ տեղեկացվի նմանատիպ գործողության մասին, ինչպես սահմանված է ստորև: Ցանկացած Կողմ պետք է բարյացակամորեն քննարկի ստացված դիմումները կամ առաջարկությունները:

3. ՎՃԿ-ն իրավասու է ստեղծելու քննախմբեր, ընդունել քննախմբերի և Վերաքննիչ մարմնի զեկույցները, հանձնարարականներ տալ կամ խնդրի առնչությամբ որոշումներ ընդունել, հսկողության տակ առնել հանձնարարականների և որոշումների իրականացումը, ինչպես նաև թույլատրել զիջումների կամ այլ պարտավորությունների կասեցումը սույն Համաձայնագրի ներքո կամ փոխհատուցումներին առնչվող խորհրդակցություններ անցկացնել, երբ պարզվի, որ Համաձայնագիրը խախտող միջոցառումների դադարեցումը հնարավոր չէ, պայմանով, որ միայն սույն Համաձայնագրի Կողմ հանդիսացող՝ ԱՀԿ անդամները պետք է մասնակցեն ՎԿՄ՝ սույն Համաձայնագրի հետ կապված վեճերի առնչությամբ կայացրած որոշումներին կամ ձեռնարկած գործողություններին:

4. Քննախմբերը պետք է ունենան հետևյալ իրավասությունների շրջանակը, եթե վեճերի կողմերը այլ կերպ համաձայնության չեն գալիս խմբի ստեղծման օրվանից 20 օրվա ընթացքում.

«Սույն Համաձայնագրի և (վեճի կողմերի մեջբերած՝ այլ նախատեսված Համաձայնագրի անվանումը) համապատասխան դրույթների ներքո ուսումնասիրել ՎԿՄ-ին հղված խնդիրը (Կողմի անվանումը) կողմից, փաստաթղթում և կատարել այնպիսի եզրակացություններ, որոնք կօգնեն ՎԿՄ-ին հանձնարարականներ տալ կամ որոշումներ կայացնել՝ նախատեսված սույն Համաձայնագրով»:

Այն վեճի դեպքում, երբ ինչպես սույն Համաձայնագրի, այնպես էլ Վեճերի կարգավորման փոխհամաձայնության 1-ին Հավելվածում թվարկված Համաձայնագրերից մեկի կամ մի քանիսի դրույթները վկայակոչվում են վեճի կողմերից մեկի կողմից, 3-րդ կետը պետք է կիրառվի քննախմբի գեկույցի միայն այն մասերի նկատմամբ, որոնք առնչվում են սույն Համաձայնագրի մեկնաբանությանն ու կիրառմանը:

5. ՎԿՄ կողմից ստեղծված քննախմբերը, որոնք պետք է սույն Համաձայնագրի ներքո քննեն վեճերը, պետք է ներառեն պետական գնումների բնագավառում որակավորում ունեցող անձանց:

6. Ամեն ջանք պետք է գործադրվի հնարավորինս արագացնելու համար ընթացակարգերը: Չնայած Վեճերի կարգավորման մասին համաձայնության 12-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերի դրույթներին՝ հատուկ խումբը պետք է փորձի իր վերջնական գեկույցը տրամադրել վեճի կողմերին առավելագույնը 4 ամիս ժամկետում, իսկ ուշացման դեպքում՝ առավելագույնը 7 ամիս ժամկետում՝ այն օրվանից սկսած, երբ խմբի կազմն ու իրավասությունների շրջանակը համաձայնեցված են: Հետևաբար, ամեն ջանք պետք է գործադրվի երկու ամսով նվազեցնելու համար Վեճերի կարգավորման մասին համաձայնության 20-րդ հոդվածի 1-ին կետով, ինչպես նաև 21-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված ժամկետները: Ավելին, Վեճերի կարգավորման փոխհամաձայնության 21-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներից անկախ՝ հատուկ խումբը պետք է ջանք գործադրի 60 օրվա ընթացքում ներկայացնելու հանձնարարականներին և որոշումներին համապատասխանեցնելու ուղղված՝ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ իր որոշումը՝ նախատեսվող համաձայնագրի հետ հակասությունների առկայության կամ դրա հետ համապատասխանության առնչությամբ:

7. Անկախ Վեճերի կարգավորման փոխհամաձայնության 22-րդ հոդվածի 2-րդ կետից՝ ցանկացած վեճ, որը ծագում է Վեճերի կարգավորման փոխհամաձայնության 1-ին Հավելվածում սույն Համաձայնագրից բացի թվարկված որևէ այլ Համաձայնագրի շրջանակներում, չպետք է հանգեցնի սույն Համաձայնագրից բխող զիջումների կամ այլ պարտավորությունների կասեցման, և սույն Համաձայնագրի շրջանակում ծագող ցանկացած վեճ չպետք է հանգեցնի նշված 1-ին Հավելվածում թվարկված որևէ Համաձայնագրից բխող զիջումների կամ այլ պարտավորությունների կասեցման:

Հոդված XXIII Բացառություններ Համաձայնագրում

1. Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես որևէ Կողմի՝ այնպիսի գործողություն կատարելը կամ տեղեկատվություն չբացահայտելը խոչընդոտող, որը Կողմը անհրաժեշտ է համարում պաշտպանելու համար իր անվտանգության էական շահերը՝ կապված զենքի, ռազմամթերքի կամ ռազմական նյութերի, կամ ազգային անվտանգության կամ ազգային պաշտպանության նպատակով գնման հետ:

2. Պայմանով, որ այնպիսի միջոցներ չկիրառվեն այն ձևով, որ ստեղծվի կամայական կամ անհիմն խտրականության այն երկրների միջև, որտեղ գործում են միևնույն պայմանները, կամ ստեղծվի միջազգային առևտրի քողարկված սահմանափակում, սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես որևէ Կողմին խոչընդոտող միջոցառումներ ձեռնարկելու կամ գործադրելու համար, որոնք անհրաժեշտ են պաշտպանելու հասարակական բարոյականությունը, կարգն ու անվտանգությունը, մարդու կյանքն ու առողջությունը, կենդանիների կյանքն ու առողջությունը, կամ բուսական աշխարհը, կամ մտավոր սեփականությունը, կամ հաշմանդամների կամ բարեգործական հաստատությունների կողմից կամ բանտերում արտադրված արտադրանքները կամ ծառայությունները:

Հոդված XXIV Եզրափակիչ դրույթներ

1. Ընդունումը և ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 1996 թվականի հունվարի 1-ին այն կառավարությունների⁸ համար, որոնց համաձայնեցված շրջանակները ներառված են սույն Համաձայնագրի I Առդիրի 1-5 Հավելվածներում, և որոնք ստորագրությամբ 1994 թվականի ապրիլի 15-ին ընդունել են Համաձայնագիրը կամ մինչև այդ ամսաթիվը ստորագրել են Համաձայնագիրը՝ վավերացման պայմանով, և հետագայում՝ մինչև 1996 թվականի հունվարի 1-ը, վավերացրել են այն:

⁸ Սույն Համաձայնագրի նպատակների համար «կառավարություն» հասկացությունը ընդունվում է նաև որպես «Եվրոպական համայնքների իրավասու մարմինները» ներառող:

2. Միանալը

Յուրաքանչյուր կառավարություն, որը ԱՀԿ անդամ է կամ նախքան ԱՀԿ Համաձայնագրի ուժի մեջ մտնելը 1947 թվականի GATT-ի Կողմ է, և որը չի հանդիսանում սույն Համաձայնագրի Կողմ, կարող է միանալ սույն Համաձայնագրին՝ իր և Կողմերի միջև համաձայնեցված պայմաններով: Միանալը կատարվում է ԱՀԿ գլխավոր տնօրենին միանալու մասին փաստաթուղթն ի պահ տալով, որը պարունակում է նշված համաձայնեցված պայմանները: Միացող կառավարության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրին միանալու ամսաթվին հաջորդող 30-րդ օրը:

3. Անցումային դրույթներ

ա) Հոնգ Կոնգը և Կորեան կարող են հետաձգել սույն Համաձայնագրի դրույթների կիրառումը՝ բացառությամբ XXI և XXII հոդվածների, բայց ոչ ավելի, քան մինչև 1997 թվականի հունվարի մեկը: Եթե կիրառումն սկսելու

ամսաթիվը նախորդի 1997 թվականի հունվարի 1-ին, ԱՀԿ գլխավոր տնօրենը 30 օր շուտ պետք է իրազեկվի դրույթների կիրառումն սկսելու մասին:

բ) Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվի և Հոնգ Կոնգի կողմից դրա կիրառման ամսաթիվի միջև ընկած ժամանակահատվածում Հոնգ Կոնգի և բոլոր այն Կողմերի միջև իրավունքները և պարտականությունները, որոնք 1994 թվականի ապրիլի 15-ի դրությամբ 1979 թվականի ապրիլի 12-ին ժնկում ստորագրված և 1987 թվականի փետրվարի 2-ին փոփոխված «Պետական գնումների մասին» Համաձայնագրի (1988 թ. Համաձայնագիր) կողմեր են, կկառավարվեն 1988 թ. Համաձայնագրի հիմնական դրույթներով՝ ներառյալ դրան կից՝ փոփոխված կամ ուղղված հավելվածները, որոնց դրույթները ներառված են սույն համաձայնագրում այդ նպատակով և ուժի մեջ կմնան մինչև 1996 թվականի դեկտեմբերի 31-ը:

գ) 1988 թվականի Համաձայնագրի Կողմեր հանդիսացող՝ սույն Համաձայնագրի Կողմերի միջև սույն Համաձայնագրի իրավունքներն ու պարտականությունները փոխարինում են 1988 թվականի Համաձայնագրի իրավունքներին և պարտականություններին:

դ) XXII հոդվածը ուժի մեջ չի մտնի մինչև ԱՀԿ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը: Մինչև այդ ժամանակը 1988 թվականի Համաձայնագրի VII հոդվածի դրույթները կկիրառվեն սույն Համաձայնագրի ներքո խորհրդակցության և վեճերի կարգավորման նկատմամբ. այդ դրույթները ներառված են սույն Համաձայնագրում նշված նպատակով: Նշված դրույթները կիրառվում են Հանձնաժողովի հովանավորության ներքո:

ե) Մինչև ԱՀԿ Համաձայնագրի ուժի մեջ մտնելը ԱՀԿ մարմիններին հղումները պետք է համարվեն համապատասխան GATT մարմնին կատարված. և՛ ԱՀԿ գլխավոր տնօրենին, և՛ ԱՀԿ քարտուղարությանը կատարված հղումները պետք է համարվեն, համապատասխանաբար, 1947 թվականի GATT ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ գլխավոր տնօրենին և GATT քարտուղարությանը կատարված:

4. Վերապահումներ

Վերապահումներ չեն կարող արվել սույն Համաձայնագրի դրույթներից որևէ մեկի առնչությամբ:

5. Ազգային օրենսդրություն

ա) Սույն Համաձայնագիրն ընդունող կամ դրան միացող յուրաքանչյուր կառավարություն սույն Համաձայնագրի՝ իր համար ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ պետք է ապահովի իր օրենքների, կանոնակարգերի ու վարչական ընթացակարգերի, ինչպես նաև կցված հավելվածներում ընդգրկված իր սուբյեկտների կողմից կիրառվող կանոնների, ընթացակարգերի ու գործելակերպերի համապատասխանությունը սույն Համաձայնագրի դրույթներին:

բ) Կողմերից յուրաքանչյուրը պետք է տեղեկացնի Հանձնաժողովին սույն Համաձայնագրին առնչվող օրենքներում և կանոնակարգերում, ինչպես նաև այդպիսի օրենքների և կանոնակարգերի կիրարկման մեջ կատարված ցանկացած փոփոխության մասին:

6. Ուղղումներ և փոփոխություններ

ա) Ուղղումները, սուբյեկտի փոխանցումները մի հավելվածից մյուսը կամ, բացառիկ դեպքերում, այլ փոփոխությունները՝ կապված I–IV Առդիրների հետ, սույն Համաձայնագրի փոխադարձորեն համաձայնեցված շրջանակների վրա տվյալ փոփոխության հավանական հետևանքների վերաբերյալ տեղեկատվության հետ մեկտեղ պետք է ծանուցվեն Հանձնաժողովին: Եթե ուղղումները, փոխանցումները կամ այլ փոփոխությունները բացարձակապես ձևական կամ աննշան բնույթ են կրում, դրանք ուժի մեջ են մտնում 30 օրվա ընթացքում՝ ոչ մի առարկություն չառաջացնելու պայմանով: Այլ դեպքում Հանձնաժողովի նախագահը անմիջապես կիրավիրի հանձնաժողովի նիստ: Նախքան նման ծանուցումը իրավունքների և պարտականությունների միջև հավասարակշռության պահման, ինչպես նաև սույն Համաձայնագրով նախատեսված՝ փոխադարձաբար համաձայնեցված շրջանակների համեմատական աստիճանը պահելու նպատակով Հանձնաժողովը քննության է առնում փոխհատուցմանն առնչվող ցանկացած առաջարկ և պահանջ: Համաձայնության չգալու դեպքում հարցին ընթացք կտրվի XXII հոդվածի դրույթներին համապատասխան:

բ) Այն դեպքում, երբ իր իրավունքների կիրարկման ընթացքում Կողմը ցանկություն է հայտնում դուրս բերել սուբյեկտին I-ին Առդիրից այն հիմքով, որ կառավարության վերահսկողությունը կամ ազդեցությունը դրա վրա գործնականում վերացել է, Կողմը ծանուցում է այս ամենի մասին Հանձնաժողովին: Նմանատիպ փոփոխությունն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի նիստի հաջորդ օրվանից՝ պայմանով, որ նիստը չկայանա ծանուցման ամսաթվից ոչ շուտ, քան 30 օրվա ընթացքում, և առարկություններ չլինեն: Առարկության դեպքում գործին ընթացք կտրվի XXII հոդվածի ներքո՝ բանակցությունների և վեճերի կարգավորման ընթացակարգերին համապատասխան: I Առդիրում առաջարկվող փոփոխություն, ինչպես նաև ցանկացած հետևանքային փոխհատուցում քննության առնելիս հաշվի պետք է առնել կառավարության վերահսկողության կամ ազդեցության վերացման հետևանքները շուկայի բացման վրա:

7. Վերանայումներ, բանակցություններ և հետագա աշխատանք

ա) Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի պետք է վերանայի սույն Համաձայնագրի իրականացումը և գործողությունը՝ հաշվի առնելով դրա նպատակները: Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի տեղեկացնում է ԱՀԿ Գլխավոր խորհրդին այն զարգացումների մասին, որոնք տեղի են ունեցել վերանայված ժամանակահատվածում:

բ) Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ երրորդ տարվա վերջից ոչ ուշ և պարբերաբար դրանից հետո, Կողմերը նախաձեռնում են հետագա բանակցություններ՝ սույն Համաձայնագիրը բարելավելու և

փոխադարձության հիման վրա բոլոր Կողմերի միջև առավելագույն հնարավորության չափով դրա շրջանակներն ընդլայնելու նպատակով՝ հաշվի առնելով զարգացող երկրներին վերաբերող V հոդվածի դրույթները:

գ) Կողմերը պետք է խուսափեն բաց ընթացակարգերով գնումները խեղաթուրող խտրական միջոցներ և գործելակերպեր ընդունելուց կամ դրանք երկարաձգելուց և բանակցությունների համատեքստում՝ համաձայն «բ» ենթակետի, ջանան վերացնել դրանք սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվին:

8. Տեղեկատվական տեխնոլոգիա

Երաշխավորելու համար, որ Համաձայնագիրը տեխնիկական առաջընթացին ավելորդ խոչընդոտ չի ստեղծի, Կողմերը պարբերաբար խորհրդակցում են Հանձնաժողովում պետական գնումներում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված զարգացումների առնչությամբ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, կարող են բանակցել Համաձայնագրի փոփոխությունների շուրջ: Այդպիսի բանակցությունները մասնավորապես նպատակ են հետապնդում երաշխավորելու, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը նպաստի թափանցիկ ընթացակարգերով պետական գնումների բաց, անխտրական և արդյունավետ իրականացման նպատակներին, որ Համաձայնագրի ներքո պայմանագրերը հստակորեն նույնացված լինեն, և որ կոնկրետ պայմանագրի առնչությամբ ամբողջ հասանելի տեղեկատվությունը նույնացված լինի: Երբ որևէ Կողմ մտադրվի նորամուծություններ կատարել, նա պետք է փորձի հաշվի առնել մյուս Կողմերի արտահայտած տեսակետները՝ կապված հնարավոր խնդիրների հետ:

9. Փոփոխություններ

Կողմերը կարող են փոփոխել սույն Համաձայնագիրը՝ հաշվի առնելով, *ի թիվս այլ հարցերի*, դրա իրականացման ընթացքում ձեռք բերված փորձը: Այդպիսի փոփոխությունը, եթե Կողմերը համաձայնության գան՝ համաձայն Հանձնաժողովի հաստատած ընթացակարգերի, չպետք է ուժի մեջ մտնի որևէ Կողմի համար, քանի դեռ տվյալ Կողմն այն չի ընդունել:

10. Դուրս գալը

ա) Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից: Դուրս գալն ուժի մեջ է մտնում դուրս գալու մասին գրավոր ծանուցումը ԱՀԿ գլխավոր տնօրենի ստանալու օրվանից 60 օր հետո: Կողմերից յուրաքանչյուրը կարող է նման ծանուցման դեպքում դիմում ներկայացնել անմիջապես Հանձնաժողովի նիստ հրավիրելու համար:

բ) Եթե սույն Համաձայնագրի Կողմը չի դառնում ԱՀԿ անդամ ԱՀԿ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կամ դադարում է լինել ԱՀԿ անդամ, նաև դադարում է լինել սույն Համաձայնագրի Կողմ, ինչն ուժի մեջ է մտնում միևնույն օրը:

11. Կոնկրետ Կողմերի միջև սույն Համաձայնագիրը չկիրառելը

Սույն Համաձայնագիրը չի կիրառվի ցանկացած երկու Կողմերի միջև, եթե Կողմերից մեկը սույն Համաձայնագիրն ընդունելիս կամ դրան միանալիս չի տվել իր համաձայնությունը նման կիրառման առնչությամբ:

12. Ծանոթագրություններ, Առդիրներ և Հավելվածներ

Սույն Համաձայնագրի ծանոթագրությունները, առդիրները և հավելվածները կազմում են դրա անբաժանելի մասը:

13. Քարտուղարություն

Սույն Համաձայնագիրը պետք է սպասարկվի ԱՀԿ-ի քարտուղարության կողմից:

14. Ի պահ տալը

Սույն Համաձայնագիրն ի պահ է տրվում ԱՀԿ գլխավոր տնօրենին, ով անհապաղ Կողմերից յուրաքանչյուրին տրամադրում է սույն Համաձայնագրի հաստատված պատճենները, 6-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ուղղում ու փոփոխություն, և 9-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր փոփոխություն, 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Համաձայնագիրն ընդունելու կամ դրան միանալու մասին յուրաքանչյուր ծանուցում, ինչպես նաև սույն հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Համաձայնագրից դուրս գալու մասին յուրաքանչյուր ծանուցում:

15. Գրանցում

Սույն Համաձայնագիրը պետք է գրանցվի ՄԱԿ-ի կանոնադրության 102-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Կատարված է Մարաքեշում 1994 թվականի ապրիլի 15-ին՝ անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն, մեկ օրինակով, յուրաքանչյուր տեքստ բնօրինակ է՝ բացառությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրի առդիրների առնչությամբ:

Ծանոթագրություններ

Սույն Համաձայնագրում, ներառյալ Առդիրները, օգտագործված «երկիր» կամ «երկրներ» տերմինները պետք է հասկացվեն որպես սույն Համաձայնագրի Կողմի առանձին մաքսային տարածք:

Սույն Համաձայնագրի Կողմի առանձին մաքսային տարածքի դեպքում, երբ Համաձայնագրում որևէ արտահայտությունը ուղեկցվում է «ազգային» որակիչով, այդ արտահայտությունը պետք է հասկացվի որպես այդ մաքսային տարածքին պատկանող, եթե այլ կերպ սահմանված չէ:

Հոդված 1, կետ 1

Հաշվի առնելով սահմանափակ պայմաններով տրամադրվող օգնությանն առնչվող ընդհանուր քաղաքականության նկատառումները, ներառյալ զարգացող երկրների նպատակները՝ կապված մման օգնության սահմանափակումները հանելու հետ, սույն Համաձայնագիրը չի կիրառվում զարգացող երկրներին սահմանափակ պայմաններով տրամադրվող օգնությանը նպաստելու համար Կողմերի կատարած գնումների նկատմամբ:

ԱՌԴԻՐ Ա

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

(Բնօրինակը՝ անգլերեն)

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Կենտրոնական իշխանությունը, որը գնումներ է կատարում սույն Համաձայնագրի ընթացակարգերի համաձայն

Շեմերը՝

Ապրանքներ՝

ՓՀԻ 130,000

Ծառայություններ (սահմանված 4-րդ Հավելվածում)

ՓՀԻ 130,000

Շինարարական ծառայություններ (սահմանված 5-րդ Հավելվածում)

ՓՀԻ 5,000,000

Սուբեկտների ցանկը

1. Հայաստանի Հանրապետության (<<) նախագահի աշխատակազմ
2. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ
3. ՀՀ Կառավարության աշխատակազմ
4. ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմ
5. ՀՀ վերահսկիչ պալատ
6. ՀՀ դատական դեպարտամենտ
7. ՀՀ գլխավոր դատախազություն
8. ՀՀ հատուկ քննչական ծառայություն
9. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
10. ՀՀ կենտրոնական բանկ (հղում 2)
11. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
12. ՀՀ պաշտպանության նախարարություն (հղում 3)
13. ՀՀ սփյուռքի նախարարություն
14. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
15. ՀՀ կրթության և գիտության նախարարություն
16. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
17. ՀՀ ֆինանսների նախարարություն
18. ՀՀ արտաքին գործերի նախարարություն
19. ՀՀ առողջապահության նախարարություն
20. ՀՀ արդարադատության նախարարություն
21. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
22. ՀՀ բնապահպանության նախարարություն
23. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
24. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
25. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
26. ՀՀ քաղաքաշինության նախարարություն
27. ՀՀ մշակույթի նախարարություն
28. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
29. ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդ (հղում 3)
30. ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն (հղում 3)
31. ՀՀ պետական եկամուտների կոմիտե
32. ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
33. ՀՀ Կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե

34. ՀՀ պետական գույքի կառավարման վարչություն
35. ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
36. ՀՀ ոստիկանություն
37. Հայաստանի փրկարար ծառայություն
38. Պետական ջրային կոմիտե
39. Պետական գիտությունների կոմիտե
40. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
41. ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողով
42. ՀՀ սոցիալական ապահովության հանձնաժողով
43. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
44. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ
45. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
46. ՀՀ ռադիոյի և հեռուստատեսության ազգային հանձնաժողով
47. ՀՀ հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհուրդ
48. Արագածոտնի մարզպետարան
49. Արարատի մարզպետարան
50. Արմավիրի մարզպետարան
51. Ղեղարքունիքի մարզպետարան
52. Լոռու մարզպետարան
53. Կոտայքի մարզպետարան
54. Շիրակի մարզպետարան
55. Սյունիքի մարզպետարան
56. Վայոց ձորի մարզպետարան
57. Տավուշի մարզպետարան

1-ին Հավելվածի ծանոթագրություն

1. Սույն ցանկը վերաբերում է «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքի գործողության շրջանակում գտնվող՝ Կառավարության բոլոր կենտրոնական մարմիններին և ստորադաս կազմակերպություններին:

2. ՀՀ կենտրոնական բանկ. Համաձայնագիրը չի կիրառվում ՀՀ կենտրոնական բանկի այն ձեռքբերումների կամ գնումների նկատմամբ, որոնք առնչվում են պետական պարտքի՝ ներառյալ վարկերի, պետական պարտատոմսերի, թղթադրամների և այլ արժեթղթերի վաճառքին, մարմանը և բաշխմանը:

3. ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ պետական անվտանգության ծառայություն և ՀՀ ոստիկանություն. նշված մարմինների համար Համաձայնագիրը տարածվում է միայն հետևյալ կատեգորիաների գնումների վրա, որոնք ենթակա են III հոդվածի 1-ին պարբերության ներքո ՀՀ վճռմանը:

22. Երկաթգծերի սարքավորումներ
23. Շարժիչային փոխադրամիջոցներ, կցանքներ (բացառությամբ 2310-ի ավտոբուսների)
24. Քարշակներ
25. Փոխադրական սարքավորումների բաղադրիչներ
26. Անվադողեր և խողովակներ
29. Շարժիչի պարագաներ
30. Սեխանիկական էներգիայի փոխանցման սարքավորումներ
32. Փայտամշակման մեքենաներ և սարքավորումներ
34. Սետաղամշակման մեքենաներ
35. Ծառայությունների և առևտրի սարքավորումներ
36. Հատուկ արդյունաբերության մեքենաներ
37. Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ
38. Շինարարական, հանքարդյունաբերության, պեղումների և խճուղու սպասարկման սարքավորումներ
39. Նյութերի բեռնման և բեռնաթափման սարքավորումներ
40. Պարան, մալուխ, շղթա և կցամասեր
41. Սառնարանային և օդորակման սարքավորումներ
42. Հրշեջ, փրկարարական և անվտանգության սարքավորումներ
43. Պոմպեր և կոմպրեսորներ
44. Հնոց, գոլորշու գեներատոր, չորացման սարքավորումներ և միջուկային ռեակտորներ
45. Ջրմուղ, ջեռուցման և կոյուղու սարքավորումներ
46. Ջրի մաքրման և կեղտաջրերի մշակման սարքավորումներ
47. Խողովակ, ռետինե խողովակ, փողրակ և կցամասեր
48. Փականներ
49. Տեխնիկական սպասարկման և վերանորոգման սարքավորում
53. Սարքավորումներ և հղկաքար
54. Հավաքովի կոնստրուկցիաներ և փայտամած
55. Անտառանյութ, հյուսնային իրեր, նրբատախտակ և երեսպատման նյութեր
56. Շինանյութեր և կառուցապատման նյութեր
61. Էլեկտրական լարեր, էներգետիկ և բաշխիչ սարքավորումներ
62. Լուսավորող սարքեր և լամպեր
63. Տազնապային և ազդանշանային համակարգեր

- 65. Բժշկական, ատամնաբուժական և անասնաբուժական սարքավորումներ և պարագաներ
 - 66. Գործիքներ և լաբորատոր սարքավորումներ
 - 67. Լուսանկարչական սարքավորումներ
 - 68. Քիմիկատներ և քիմիական արտադրանքներ
 - 69. Ուսումնական օժանդակ միջոցներ և սարքեր
 - 70. Ընդհանուր նպատակների ծառայող տվյալների ավտոմատ մշակման սարքավորումներ, ծրագրային ապահովման պարագաներ և օժանդակ սարքավորումներ
 - 71. Կահույք
 - 72. Կենցաղային և առևտրային կահավորանք և տեխնիկա
 - 73. Սննդի պատրաստման և մատուցման սարքավորումներ
 - 74. Գրասենյակային սարքավորումներ, տեսագրման սարքավորումներ և տվյալների ավտոմատ մշակման սարքավորումներ
 - 75. Գրասենյակային պարագաներ և սարքեր
 - 76. Գրքեր, քարտեզներ և այլ հրատարակություններ
 - 77. Երաժշտական գործիքներ, ձայնագրիչներ և ռադիոներ
 - 78. Ժամանցային և մարզական սարքավորումներ
 - 79. Մաքրման սարքավորումներ և պարագաներ
 - 80. Խոզանակներ, ներկեր, հերմետիկ ծածկող և սոսնձող նյութեր
 - 81. Բեռնարկղեր և փաթեթավորման պարագաներ
 - 85 Զուգարանային պարագաներ
 - 87 Գյուղատնտեսական պարագաներ
 - 88. Կենդանի անասուններ
 - 91. Վառելանյութեր, քսուքներ, յուղեր և մեղրամոմ
 - 93. Ոչ մետաղական ֆաբրիկատ նյութեր
 - 94. Ոչ մետաղական չմշակված նյութեր
 - 96. Հանքաքար, հանածոներ և դրանց հիմնական արդյունքները
 - 99. Այլևայլք
4. Ընդհանուր ծանոթագրությունների մեջ սահմանված պայմանները կիրառվում են սույն Հավելվածի առնչությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ենթակենտրոնական իշխանության մարմիններ, որոնք գնումներ են կատարում սույն Համաձայնագրի ընթացակարգերի համաձայն

Շեմերը՝

Ապրանքներ՝	ՓՀԻ 200,000
Ծառայություններ (սահմանված 4-րդ Հավելվածում)	ՓՀԻ 200,000
Շինարարական ծառայություններ (սահմանված 5-րդ Հավելվածում)	ՓՀԻ 5,000,000

Սուբյեկտների ցանկը

1. 1995 թվականի նոյեմբերի 7-ի հմ. Ն-062-1 «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հետևյալ տեղական իշխանության մարմիններն են.

- Երևանի քաղաքապետարան
- Աշտարակի քաղաքապետարան
- Ապարանի քաղաքապետարան
- Թալինի քաղաքապետարան
- Արտաշատի քաղաքապետարան
- Արարատի քաղաքապետարան
- Մասիսի քաղաքապետարան
- Վեդիի քաղաքապետարան
- Արմավիրի քաղաքապետարան
- Վաղարշապատի քաղաքապետարան
- Մեծամորի քաղաքապետարան
- Գավառի քաղաքապետարան
- Ճամբարակի քաղաքապետարան
- Մարտունու քաղաքապետարան
- Սևանի քաղաքապետարան
- Վարդենիսի քաղաքապետարան
- Վանաձորի քաղաքապետարան
- Ալավերդու քաղաքապետարան
- Ախթալայի քաղաքապետարան
- Թումանյանի քաղաքապետարան
- Սպիտակի քաղաքապետարան
- Ստեփանավանի քաղաքապետարան
- Տաշիրի քաղաքապետարան

- Հրագղանի քաղաքապետարան
- Աբովյանի քաղաքապետարան
- Բյուրեղավանի քաղաքապետարան
- Եղվարդի քաղաքապետարան
- Ծաղկաձորի քաղաքապետարան
- Նոր Հաճնի քաղաքապետարան
- Չարենցավանի քաղաքապետարան
- Գյումրու քաղաքապետարան
- Արթիկի քաղաքապետարան
- Մարալիկի քաղաքապետարան
- Կապանի քաղաքապետարան
- Ագարակի քաղաքապետարան
- Գորիսի քաղաքապետարան
- Դաստակերտի քաղաքապետարան
- Մեղրիի քաղաքապետարան
- Սիսիանի քաղաքապետարան
- Քաջարանի քաղաքապետարան
- Եղեգնաձորի քաղաքապետարան
- Ջերմուկի քաղաքապետարան
- Վայքի քաղաքապետարան
- Իջևանի քաղաքապետարան
- Բերդի քաղաքապետարան
- Դիլիջանի քաղաքապետարան
- Նոյեմբերյանի քաղաքապետարան

2-րդ Հավելվածի ծանոթագրություն

Ընդհանուր ծանոթագրությունների մեջ սահմանված պայմանները կիրառվում են սույն Հավելվածի առնչությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Բոլոր մյուս սուբյեկտները, որոնք գնումներ են կատարում սույն Համաձայնագրի ընթացակարգերի համաձայն

Շեմերը՝

Ապրանքներ՝	ՓՀԻ 400,000
Ծառայություններ (սահմանված 4-րդ Հավելվածում)	ՓՀԻ 400,000
Շինարարական ծառայություններ (սահմանված 5-րդ Հավելվածում)	ՓՀԻ 5,000,000

Հանրային օրենքով ղեկավարվող բոլոր իրավաբանական անձինք (իշխանության մարմիններ, հաստատություններ և հիմնադրամներ), մասնավորապես՝

1. Պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ.
2. 50 տոկոսից ավելի պետական կամ համայնքային բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություններ.
3. Հանրային ծառայություններ՝ ներառյալ կոմունալ հատվածի ընկերությունները, որոնց գնումների վրա տարածվում է պետական գնումների մասին օրենքը:

3-րդ Հավելվածի ծանոթագրություն

1. Հանրային օրենքով ղեկավարվող իրավաբանական անձանց այս ցանկը պետք է հրատարակվի «Գնումների մասին» պաշտոնական էլեկտրոնային տեղեկագրում՝ www.procurement.am:

2. Ընդհանուր ծանոթագրությունների մեջ նշված պայմանները կիրառվում են սույն Հավելվածի առնչությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Ծառայություններ

Ունիվերսալ ծառայությունների ցանկը ներառում է MTN.GNS/W/120 փաստաթղթում ընդգրկված բոլոր ծառայությունները:

4-րդ Հավելվածի ծանոթագրություն

Ընդհանուր ծանոթագրությունների մեջ նշված պայմանները կիրառվում են սույն Հավելվածի առնչությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

Շինարարական ծառայություններ

Շինարարական ծառայությունների մասին պայմանագիրը մի պայմանագիր է, որը, անկախ միջոցներից, նպատակ ունի իրականացնելու քաղաքացիական կամ շինարարական աշխատանքներ՝ կենտրոնական արտադրանքի դասակարգման 51-րդ բաժնի առումով:

Շեմը՝

ՓՀԻ 5,000,000 Հավելվածներ 1,2-ի և 3-ի համար
Առաջարկված շինարարական ծառայությունների ցանկը

51-րդ բաժնում նշված բոլոր ծառայությունները

5-րդ Հավելվածի ծանոթագրություն

Ընդհանուր ծանոթագրություններում սահմանված պայմանները կիրառվում են սույն Հավելվածի առնչությամբ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանը սույն Համաձայնագրի առավելությունները չի տարածի որևէ պայմանագրի վրա, որը՝
ա) կնքվել է միջազգային համաձայնագրի ներքո և նախատեսված է ստորագրող պետությունների կողմից որևէ նախագծի համատեղ իրականացման կամ շահագործման համար,
բ) կնքվել է գործերի տեղակայման առնչվող միջազգային պայմանագրի ներքո,
գ) ամբողջովին կամ մասնակիորեն ֆինանսավորվում է միջազգային կազմակերպության կողմից կամ կնքվել է վերջինիս կոնկրետ ընթացակարգի ներքո՝ այն պարագայում, երբ կիրառելի ընթացակարգն անհամատեղելի է Համաձայնագրի հետ:
2. Սույն Համաձայնագիրը չի կիրառվի գյուղմթերքի գնման առնչությամբ, որը կատարվել է գյուղատնտեսությանն աջակցելու և մարդկանց սննդապահովման ծրագրերին օժանդակելու նպատակով:
3. Սույն Համաձայնագիրը չի կիրառվի առևտրային վաճառքի կամ վերավաճառքի նպատակով գնված կամ վաճառքին ու վերավաճառքին նպատակաուղղված ապրանքների արտադրման կամ ծառայությունների մատուցման նպատակով գնված ապրանքների կամ ծառայությունների առնչությամբ՝ այն պայմանով, որ պայմանագրի կողմը չունի վաճառելու հատուկ կամ բացառիկ իրավունք, իսկ այլ սուբյեկտներ ազատ են վաճառելու նույն պայմանների ներքո՝ ինչ պայմանագրի սուբյեկտը:
4. Սույն Համաձայնագիրը չի կիրառվի հողի, առկա շինությունների կամ այլ անշարժ գույքի ձեռքբերման կամ դրան առնչվող այլ իրավունքների նկատմամբ:

ԱՌԴԻՐ II

ԿՈՂՄԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ՝ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ - IX ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ XVIII ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏ

«Գնումների մասին» պաշտոնական էլեկտրոնային տեղեկագիր
www.procurement.am:

ԱՌԴԻՐ III

ԸՆՏՐՈՎԻ ՄՐՑԱՌՔԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐԱԿԱԿՈՐԿԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՐԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ - IX ՀՈՂՎԱԾԻ 9-ՐԴ ԿԵՏ

«Գնումների մասին» պաշտոնական էլեկտրոնային տեղեկագիր
www.procurement.am:

ԱՌԴԻՐ IV

ԿՈՂՄԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ՝ ՕՐԵՆՔՆԵՐԻ, ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ, ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ - XIX ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏ

«Գնումների մասին» պաշտոնական էլեկտրոնային տեղեկագիր
www.procurement.am:

Պետական գնումների մասին Համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալը

Որոշման լրամշակված նախագիծ, վերջնական առաջարկ և գնումների մասին օրենքի լրամշակված նախագիծ

2010 թվականի նոյեմբերի 5-ի հետևյալ ծանուցումը շրջանառվում է Հայաստանի Հանրապետության (<<) պատվիրակության խնդրանքով:

Ի գիտություն պատվիրակությունների՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ծանուցում է, որ կից ներկայացված գնումների մասին օրենքի լրամշակված նախագիծը համապատասխանում է այն բոլոր նկատառումներին, որոնք ստացվել էին 2010 թվականի սեպտեմբերի 30-ին շրջանառված նախկին տարբերակի առնչությամբ (GPA/ACC/ARM/8):

Հայաստանը նաև ծանուցում է, որ «Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի, միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են

օրենքներով, ապա գերակայում են պայմանագրի նորմերը: Քանի որ Պետական գնումների մասին Համաձայնագիրը համարվում է միջազգային Համաձայնագիր, որը պետք է վավերացվի Հայաստանի կողմից, այն պետք է կազմի Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Եթե Համաձայնագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ապա գերակայում են Համաձայնագրի նորմերը»: Սույն հավելյալ երաշխիքն արտացոլվում է նաև կից ներկայացված որոշման նախագծի նախաբանում:

Սույն հարցի առնչությամբ առանձին ծանուցում հետագայում կներկայացվի նախագահի կողմից:

Պետական գնումների մասին Համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալը Կոմիտեի Որոշում [...]

Պետական գնումների կոմիտեն, հաշվի առնելով Պետական գնումների մասին Համաձայնագրի XXIV:2-րդ հոդվածը, նկատի ունենալով Պետական գնումների մասին Համաձայնագրին անդամակցելու Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված դիմումը՝ ներառված 2009 թվականի սեպտեմբերի 4-ի GPA/ACC/ARM/1 փաստաթղթում, ինչպես նաև այն բավարարելու նպատակով Պետական գնումների մասին Համաձայնագրի Կողմերի հետ վարված խորհրդակցությունները,

հաշվի առնելով, որ Պետական գնումների մասին Համաձայնագրի XXIV հոդվածի «ա» կետով սահմանված է, որ, ընդունելով կամ անդամակցելով սույն Համաձայնագրին, Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ յուրաքանչյուր կառավարություն պետք է երաշխավորի այն փաստը, որ իր օրենքները, կանոնակարգերը և վարչական ընթացակարգերը և կից ցանկում ներկայացված սուբյեկտների կողմից կիրառված կանոնները, ընթացակարգերը և սովորույթները համապատասխանում են Համաձայնագրի դրույթներին,

նկատի ունենալով ՀՀ կողմից նախատեսված պետական գնումների մասին օրենսդրության վերաբերյալ տեղեկատվությունը, որը սահմանված է հետևյալ փաստաթղթերում՝ 2010 թվականի ապրիլի 20 GPA/ACC/ARM/3, 2010 թվականի հուլիսի 6 GPA/ACC/ARM/6 (Կանադայի և ԱՄՆ-ի կողմից ներկայացված դիտողությունների և հարցերի առնչությամբ ՀՀ պատասխանները) և 2010 թվականի սեպտեմբերի 30 GPA/ACC/ARM/8, ի լրումն ՀՀ կողմից սույն օրենսդրությունն ընդունելու և ուժի մեջ մտցնելու վերաբերյալ արտահայտած մտադրության,

նկատի ունենալով նաև այն, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա գերակայում են պայմանագրի նորմերը: Քանի որ Պետական գնումների մասին Համաձայնագիրը համարվում է միջազգային համաձայնագիր, որը պետք է վավերացվի Հայաստանի կողմից, այն կկազմի Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Եթե Համաձայնագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ապա գերակայում են Համաձայնագրի նորմերը,

որոշում է կայացնում հետևյալի շուրջ.

1. Պետական գնումների մասին Համաձայնագրի XXIV:2-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ Հայաստանը կարող է միանալ Համաձայնագրին սույն որոշման պայմաններին համապատասխան [Հավելված Ա-ում] և պայմանով, որ նախքան Հայաստանի միացման փաստաթուղթն ի պահ հանձնելը՝

Ա) Հայաստանն ընդունում և ուժի մեջ է մտցնում Պետական գնումների մասին Համաձայնագրի դրույթներին համապատասխան օրենսդրությունը, ինչպես պահանջում է Համաձայնագրի հոդված XXIV:5.ա կետում,

Բ) վերոնշյալ օրենսդրության ընդունումից հետո Հայաստանը Պետական գնումների կոմիտեի դիտարկմանն է ներկայացնում նշված օրենսդրությունը դրա ուժի մեջ մտնելու մասին տեղեկատվության հետ միասին, և

Գ) դիտարկելով ՀՀ կողմից ներկայացված օրենսդրությունը և առնչվող տեղեկատվությունը՝ կոմիտեն հաստատում է այն փաստը, որ ՀՀ-ն համապատասխանում է անդամակցելու պայմաններին ու դրույթներին և, հետևաբար, կարող է ի պահ հանձնել միացման իր փաստաթուղթը:

2. Հայաստանի համար Պետական գնումների մասին Համաձայնագրին ուժի մեջ է մտնում անդամակցության իր փաստաթուղթը Գլխավոր տնօրենին ի պահ հանձնելու 30-րդ օրը, որը պետք է վերարտադրի սույն որոշմանը կից ներկայացված պայմանները [Հավելում Ա-ում] և հաստատի այն փաստը, որ ՀՀ կողմից ընդունվել և ուժի մեջ է մտցվել 1-ին պարբերությունում հղում կատարված օրենսդրությունը:

3. Հայաստանը կարող է ի պահ հանձնել անդամակցության իր փաստաթուղթը [երեք ամսվա] ընթացքում այն օրվանից, երբ կոմիտեն հաստատի, որ ՀՀ-ն համապատասխանում է անդամակցության պայմաններին ու դրույթներին՝ 1.գ պարբերության հղման համաձայն, կամ դրանից ավելի ուշ՝ ինչպես որոշի կոմիտեն:

4. Հայաստանի միանալուն պես նրա անդամակցության փաստաթղթին կից պայմանները կկազմեն Պետական գնումների մասին Համաձայնագրի անբաժանելի մասը՝ որպես Հայաստանին առնչվող Հավելվածներ և ծանուցումներ:

Քարտուղարության կողմից նշում: Սույն փաստաթղթի Ա Հավելումը ներկայացնում է ՀՀ վերջնական առաջարկը, իսկ Բ Հավելումը ներկայացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը պետք է առաջիկա շաբաթների ընթացքում քննարկվի ՀՀ խորհրդարանում:⁹

⁹ Ա և Բ Հավելումները միայն անգլերեն են: